

ՊԱՅՏՈՆԱԿԱՆ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

«8» հուլիսի 2021թ.

N 462-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 17-Ի N 120-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ`

1. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարի 2020 թվականի օգոստոսի 17-ի «Ուսումնական հաստատության ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի հուլիսի 19-ի N 167-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 120-Ն հրամանով հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումը.

1) 62-րդ կետի 1-ին ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ մոտ` 1.1-ին ենթակետ.

«1.1) 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով տեղահանված մասնակցին.»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

L. ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

«17» հուլիսի 2021թ.

N 471-Ն

ք.Ստեփանակերտ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՅՉԻ (ՂԱՍՏԻԱՐԱԿԻ) ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ ԱՆՅՎԱՅՎՈՂ ՄՐՅՈՒՅԹԻ ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ՓՈԽԵՐԻ ՀԱՐՅԱՆՎՈՐ ԲԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի օգոստոսի 17-ի N 120-Ն հրամանով հաստատված կարգի 13-րդ կետը`

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ`

1. Հաստատել ուսումնական հաստատության ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար անցկացվող մրցույթի գրավոր և բանավոր փուլերի հարցաշարերը` համաձայն հավելված N1, N2-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության գիտության և սպորտի նախարարի 2019 թվականի հուլիսի 31-ի N 215-Մ հրամանը:

3. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի տեղեկատվական և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Ն.Նիկողոսյանին` հարցաշարերը տեղադրել ԱԶ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության edu.nkr.am կայքէջում:

4. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Լուսարար» պաշտոնաթերթի խմբագիր Ս. Խաչատրյանին` հարցաշարերը տպագրել պաշտոնաթերթի առաջիկա համարում:

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

L. ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

Հավելված 1
ԼԴՀ կրթության և գիտության նախարարի
2021 թվականի հուլիսի 17-ի N 471/Մ հրամանի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՅՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄՐՅՈՒՅԹԻ ԱՆՅՎԱՅՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՓՈԽԻ ՀԱՐՅԱՇԱՐ

1. Արցախի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է...

• Ժողովրդին:
ԱԶ Սահմանադրություն, հոդված 2

2. Արցախի Հանրապետության Նախագահի ընտրությունները անցկացվում են..

• Ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա` գաղտնի քվեարկությամբ:
ԱԶ Սահմանադրություն, հոդված 7

3. Ո՞ր նորմատիվ փաստաթղթով է սահմանվում դասի տևողությունը:

• Դասի տևողությունը սահմանվում է հանրակրթության պետական չափորոշիչով:
«Հանրակրթության մասին» ԼԴՀ օրենք, հոդված 17.3

4. Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունը...

• Անվճար է:
ԱԶ Սահմանադրություն, հոդված 38.1

5. Կրթության ո՞ր աստիճան է պարտադիր:

• Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
«Հանրակրթության մասին» ԼԴՀ օրենք, հոդված 4

6. Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն...

• Ազգային դպրոցն է:
«Կրթության մասին» ԼԴՀ օրենք, հոդված 4.2

7. Ազգային դպրոցի գլխավոր նպատակը...

• Մասնագիտական պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:
«Կրթության մասին» ԼԴՀ օրենք, հոդված 4.2

8. Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության գործընթացը կարգավորվում է

• Օրինակելի ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով:
«Կրթության մասին» ԼԴՀ օրենք, հոդված 14.2

9. Օրինակելի ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը մշակում և հաստատում է...

• Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:
«Կրթության մասին» ԼԴՀ օրենք, հոդված 14.2

10. Նշված հանրակրթական հիմնական ծրագրերից ո՞րը պարտադիր չէ.

• Նախադպրոցական կրթական ծրագիրը:
Հիմք` «Կրթության մասին» ԼԴՀ օրենք, հոդված 16

11. Ուսումնական հաստատության հիմնադիր փաստաթուղթը...

• Հիմնադրի (հիմնադիրների) հաստատած կանոնադրությունն է:
«Կրթության մասին» ԼԴՀ օրենք, հոդված 32.1

12. Հանրակրթական հիմնական ծրագրերն...

• Ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի և դրանց համապատասխան ուսուցման կազմակերպման ձևերի, միջոցների ու մեթոդների ամբողջությունն է:
«Հանրակրթության մասին» ԼԴՀ օրենք, հոդված 7.1

13. Հանրակրթական պետական ծրագրի օրինակելի ուսումնական պլանը կազմված է ...

• Պետական և դպրոցական բաղադրիչներից:
Հանրակրթության մասին» ԼԴՀ օրենք, հոդված 7.5

14. Պետական բաղադրիչը ներառում է...

• Առարկայացանկը և դրան հատկացվող ժամաքանակները:
«Հանրակրթության մասին» ԼԴՀ օրենք, հոդված 7.5.1

15. Դպրոցական բաղադրիչին հատկացված ժամաքանակը նախատեսված է...

• Հոսքային կամ առանձին առարկաների խորացված կրթական ծրագրերի իրականացման և (կամ) սովորողների նախաիրություններին, ուսումնական հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով:

«Հանրակրթության մասին» ԼԴՀ օրենք, հոդված 7.5.2

16. Դպրոցական բաղադրիչը տնօրինում է...

• Ուսումնական հաստատությունը:
«Հանրակրթության մասին» ԼԴՀ օրենք, հոդված 7.5.2

17. Հանրակրթական պետական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունն օրինակելի ուսումնական պլանի հիման վրա հաստատում է...

• Իր ուսումնական պլանը:
«Հանրակրթության մասին» ԼԴՀ օրենք, հոդված 7.5.2

18. Ուսումնական տարին բաղկացած է ...

• Ուսումնական շաբաթներից, քննաշրջաններից և արձակուրդներից:
«Հանրակրթության մասին» ԼԴՀ օրենք, հոդված 15.2

19. Պետական ուսումնական հաստատության ուսուցչի մեկ դրույթի լրիվ ուսումնական ծանրաբեռնվածությունը (դասավանդման ծավալը) չի կարող գերազանցել ...

• Շաբաթական քանակը դասաժամը:
«Հանրակրթության մասին» ԼԴՀ օրենք, հոդված 25.3

20. Ուսումնական շաբաթների թիվը սահմանվում է ...

• Հենքային ուսումնական պլանով:
«Հանրակրթության մասին» ԼԴՀ օրենք, հոդված 15.3

21. Պետական ուսումնական հաստատությունում ուսումնական շաբաթվա հնգօրյա կամ վեցօրյա տևողությունը սահմանում է...

• Ուսումնական հաստատությունը` օրենքով սահմանված ժամկետում համաձայնեցնելով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հետ:

ՀԱՐՑԱԶԱՐ

«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 15.4

22. Ոչ պետական ուսումնական հաստատությունում ուսումնական շաբաթվա հնգօրյա կամ վեցօրյա տևողությունը սահմանում է...

• **Հիմնադիրը՝ օրենքով սահմանված ժամկետում համաձայնեցնելով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հետ:**

«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 15.4

23. ԼՂՀ տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզու...

• **գրական հայերենն է:**

«Լեզվի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 2, մաս-1

24. Ո՞վ է համարվում երեխա:

• **Երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով գործունակություն է ձեռք բերում կամ գործունակ է ճանաչվում ավելի վաղ:**

«Երեխայի իրավունքների մասին» ԼՂՀ օրենք, հոդված 1

25. Ի՞նչ է ստուգում և ուսումնասիրում Կրթության պետական տեսչությունը:

• **Նախադպրոցական, հանրակրթական հիմնական, հատուկ ընդհանուր, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կրթական գործունեությունը՝ անկախ կազմակերպարարական ձևից և ենթակայությունից:**

«Կրթության պետական տեսչության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 9, մաս 1

26. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության բնագավառում պետական կառավարման տարածքային մարմինների իրավասություններից է...

• **վկայագրել երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:**

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 19

27. Հեռավար կրթությունը՝

• **կրթական ծրագրի իրականացման ձև է, որի շրջանակներում անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և ուսուցչի միջև իրականացվում է տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով և հիմնական հանրակրթական ծրագրերի կազմակերպման ընթացքում կարող է կիրառվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով և դեպքերում՝ որոշակի ժամկետներով:**

ԱՀ «Հանրակրթության մասին» օրենք, հոդված 1, կետ 6.1

28. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց տնային ուսուցման իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը սահմանում է...

• **Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:**

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 10.1

29. Ամենամյա արձակուրդը լինում է...

• **Նվազագույն, երկարացված և լրացուցիչ:**

«ՀՀ աշխատանքային օրենսգիրք», հոդված 158.2

30. Ո՞ր դեպքում ամենամյա արձակուրդը կարող է տրամադրվել մասերով:

• **Կողմերի համաձայնությամբ:**

«ՀՀ աշխատանքային օրենսգիրք», հոդված 163

31. Ո՞րն է համարվում աշխատանքային կարգապահության խախտում:

• **Աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:**

«ՀՀ աշխատանքային օրենսգիրք», հոդված 220

32. Ի՞նչ է սահմանում հանրակրթության պետական չափորոշիչը:

• **Հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, կրթական ծրագրերի առավելագույն ժամաչը, ըստ կրթական մակարդակների շրջանավարտների մեթոդական ընդհանրական որակական պահանջները, սովորողների գնահատման համակարգը:**

«Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգը» ԼՂՀ կառավարության 2010 թ. որոշման

33. Դրական վարքի ձևավորմանն ուղղված միջամտությունն ու աջակցությունը՝

• **հիմնված է առաջընթացի մշտադիտարկման, տվյալների բազային վերլուծության և աջակցման աստիճանի որոշման վրա և փորձում է նվազեցնել աշակերտների նկատմամբ ուսուցիչների բացասական ուշադրությունը, որը, որպես կանոն, հակառակ ազդեցություն է ունենում՝ ավելացնելով և ամրապնդելով ցանկալի վարքագիծը:**

Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք, երկրորդ հրատարակություն, Երևան, Աստղիկ, 2020

34. Ո՞րն է համարվում ձեռնարկատիրական գործունեության տեսակ՝

• **համակարգչային ծրագրերի և լեզուների լրացուցիչ ուսուցման կազմակերպում:**

«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 15, մաս 2

35. Բազմամասնագիտական թիմը՝

• **բազմաթիվ ոլորտներ մերկայացնող մասնագետներից և երեխայի ընտանիքի անդամներից բաղկացած խումբ է, որը հետապնդում է մեկ ընդհանուր նպատակ՝ ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի հաջողությունը հանրակրթական դասարանում:**

Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք, երկրորդ հրատարակություն, Երևան, Աստղիկ, 2020

36. Ո՞ր տարիքը լրանալուց հետո է առաջանում վարչական պատասխանատվություն:

• **Վարչական պատասխանատվության ենթակա են այն անձինք, որոնց տասնվեց տարին լրացել է մինչև վարչական իրավախախտում կատարելու պահը:**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, հոդված 12

37. Ուսումնադաստիարակչական գործընթացի գործառույթ է՝

• **կրթական գործառույթը՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների բանկի ձևավորումը, որը հիմք է դառնում դաստիարակության գործընթացի կազմակերպման համար:**

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լատուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նահիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

38. Ո՞րն է հանրակրթական դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը:

• **Հանրակրթական դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը դասն է:**

«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 30

39. Դասի տևողությունը սահմանվում է...

• **Հանրակրթության պետական չափորոշիչով:**

«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 30

40. Հանրակրթական դպրոցն օրինակելի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով նախատեսված ժամաքանակը բաշխում է...

• **Պետական բաղադրիչով սահմանված, նախարարության կողմից երաշխավորված կամ հանրակրթական դպրոցի կողմից մշակված և նախարարության կողմից հավանություն ստացած առարկաներին:**

«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 33

41. Ո՞րն է հանրակրթական դպրոցի կոլեգիալ կառավարման մարմինը:

• **Խորհուրդը:**

«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 49

42. Ո՞ր մարմնի սահմանած կարգով է ձևավորվում խորհուրդը:

• **Խորհուրդը ձևավորվում է նախարարության սահմանած կարգով:**

«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 50

43. Խորհրդի անդամների թեկնածուներ առաջադրում են...

• **Մանկավարժական խորհուրդը, ծնողական խորհուրդը, տարածքային կառավարման մարմինը, նախարարությունը և տեղական ինքնակառավարման մարմինը:**

«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 53

44. Կառավարման ո՞ր մարմնի պահանջով է խորհրդի անվանական կազմի հաստատումից հետո ի՞նչ ժամկետում է գումարվում խորհրդի առաջին նիստը:

• **Տարածքային կառավարման մարմնի պահանջով՝ յոթնօրյա ժամկետում:**

«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 57

45. Չայների ի՞նչ հարաբերակցությամբ և քվեարկության ի՞նչ ձևով է ընտրվում խորհրդի նախագահը:

• **Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ, փակ քվեարկությամբ:**

«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 58

46. Ո՞ւմ կողմից են գումարվում խորհրդի նիստերը

• **Խորհրդի նիստերը գումարվում են նրա նախագահի կողմից՝ առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, ինչպես նաև լիազորված պետական մարմնի, տնօրենի, խորհրդի անդամների 1/3-ի պահանջով:**

«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 61

47. Հանրակրթական դպրոցի տնօրենը ի՞նչ կարգավիճակով է մասնակցում խորհրդի նիստերին:

• **Խորհրդակցական ձայնի իրավունքով:**

«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 68.3

48. Ի՞նչ ժամկետներում են գումարվում մանկավարժական խորհրդի նիստերը:

• **Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր՝**

1) տնօրենի նախաձեռնությամբ.
2) մանկավարժական խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ.3) նախարարության և (կամ) տարածքային կառավարման մարմնի, Ստեփանակերտի քաղաքապետի նախաձեռնությամբ:

«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 84

49. Մանկավարժական խորհրդի որոշումների կատարումն ապահովում է...

• **Հանրակրթական դպրոցի տնօրենը:**

«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 89

50. Հանրակրթության պետական չափորոշիչը մշակում է...

• **Կրթության պետական կառավարման լիազոր մարմինը:**

Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգ, բաժին 2, կետ 3

51. Հանրակրթության պետական չափորոշիչը հաստատում է...



ԳՐԱՎՈՐ

3 • Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգ, բաժին 3, կետ 5

52. Առարկայական չափորոշիչը հաստատում է...

• Կրթության պետական կառավարման լիազոր մարմինը:

Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգ, բաժին 3, կետ 6

53. Ինչպե՞ս է սահմանվում «ուսուցիչ» հասկացությունը:

• Ուսումնական հաստատությունում սովորողների կողմից առարկայական ծրագրերի յուրացումը դասապրոցեսի միջոցով ապահովող և այդ գործընթացի համար անմիջականորեն պատասխանատու մանկավարժական աշխատող:

«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 3. կետ 13

54. Ինչպե՞ս է սահմանվում «ուսուցչի վերապատրաստում» հասկացությունը:

• Վերապատրաստող կազմակերպություններում ուսուցչի կողմից կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած՝ ուսուցչի վերապատրաստման չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան մասնագիտական նոր գիտելիքների, հմտությունների և ունակությունների յուրացում ու կատարելագործում:

«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 26.10

55. Ինչպե՞ս է սահմանվում «ուսուցչի ատեստավորում» հասկացությունը:

• Ուսուցչի գիտելիքների, աշխատանքային կարողությունների, հմտությունների՝ զբաղեցրած պաշտոնին համապատասխանության որոշման գործընթաց:

«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 3.14

56. Ինչպե՞ս է սահմանվում «ուսուցչի որակավորման տարակարգ» հասկացությունը:

• Ուսուցչի մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ու կարողություններին համապատասխանող որակավորման չափանիշ:

«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 26.24

57. Ի՞նչ է ուսուցման մեթոդը:

• Մանկավարժի և սովորողի ուսուցման նպատակների ուղղված և որոշակիորեն կարգավորված գործունեություն:

(Արմատուրյան Ա., Գյուլբուրդյան Ա., Խաչատրյան Ա., Խրիմյան Ա., Պետրոսյան Մ./ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ - Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004. զլ. 2– 180 էջ)

58. Ինչո՞վ է պայմանավորված դասի ընթացքում կիրառվող մեթոդների ընտրությունը:

• Դասի նպատակով:

(Արմատուրյան Ա., Գյուլբուրդյան Ա., Խաչատրյան Ա., Խրիմյան Ա., Պետրոսյան Մ./ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ - Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004. զլ. 2– 180 էջ)

59. Ձննական մեթոդներ են՝

• Էքսկուրսիա, ցուցադրում

(զլ. V, Ղույունյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Ձանգակ-97, 2005թ., 464 էջ)

60. Ձննական մեթոդներ են՝

• Իլյուստրացիա, դիտում:

(զլ. V, Ղույունյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Ձանգակ-97, 2005թ., 464 էջ)

61. Դասարանի ղեկավարը՝

• իրականացնում է ընդհանուր մանկավարժական կառավարում՝ սերտորեն համագործակցելով ուսուցիչների, աշակերտների և ծնողների հետ:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լատուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նահիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

62. Դասղեկի աշխատանքային պլանը՝

• ապագային նպատակամղված գործունեություն է, որը նախանշում է աշակերտների զարգացման հիմնական ուղիները:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լատուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նահիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

63. Նախագծային ուսուցումը՝

• ուսումնաճանաչողական և համատեղ աշխատանքի կազմակերպման ձև է, որում ներգրավված են դասավանդողներն ու ուսումնառուները:

Նախագծային ուսուցում. Ալեքսանդր Շագաֆյան (Կրթություն ամենուր և բոլորին) Բուն գիտամասնագիտական TV, http://boon.am/learning

64. Խոսքային մեթոդներ են՝

• Զրույց, դասախոսություն, աշխատանք դասազրբով:

(զլ. V, Ղույունյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Ձանգակ-97, 2005թ., 464 էջ)

65. Գործնական մեթոդներ են՝

• Վարժություններ, գործնական աշխատանքներ

(զլ. V, Ղույունյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Ձանգակ-97, 2005թ., 464 էջ)

66. Գործնական մեթոդներ են՝

• Լաբորատոր աշխատանքներ, ճանաչողական խաղեր

(զլ. V, Ղույունյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Ձանգակ-97, 2005թ., 464 էջ)

67. Հանրակրթության պետական չափորոշիչի կառուցվածքը

• Հանրակրթության պետական չափորոշիչը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի՝
1) ուսումնական բնագավառներն ու կրթության բովանդակության բաղադրիչները,
2) շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների և ուսումնական բնագավառների.
3) հենքային ուսումնական պլանը և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները.
4) սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը

«Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգը» «ԼՂՀ կառավարության 2010 թ. որոշման»

68. Գնահատման ձևերը: Ո՞րն է ներքին գնահատումը

• Ներքին գնահատումը կիրառվում է դասի ընթացքում՝ հարցման, ուսուցողական, ստուգողական և այլ առաջադրանքների ստուգման միջոցով, դասընկերների և ուսուցիչների հետ առօրյա շփումների, ուսումնական գործունեության ամփոփման ընթացքում: Այս ձևով գնահատվում են ոչ միայն յուրաքանչյուր սովորողի (դասարանի) ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները, այլև նրա (դասարանի) զարգացման ընթացքը:

«Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգը» «ԼՂՀ կառավարության 2010 թ. որոշման»

69. Դպրոցական բռնությունը՝

• բռնության տարատեսակ է, որի դեպքում ուսուցիչների (կամ աշակերտների) կողմից ուժ է կիրառվում աշակերտների նկատմամբ կամ, ինչը պատահում է չափազանց հազվադեպ, աշակերտների կողմից ուժ է կիրառվում ուսուցչի նկատմամբ:

• կարող է լինել հուզական եւ ֆիզիկական բնույթի:

Մարինե Միքայելյան, Բռնության և զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Ճարտարագետ, 2016

70. Ո՞ր խմբերը կարելի է համարել համագործակցային:

• Այն խմբերը, որի անդամները գիտակցում են, որ իրենց հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամների ներդրումից:

(զլ. 2, Արմատուրյան Ա., Գյուլբուրդյան Ա., Խաչատրյան Ա., Խրիմյան Ա., Պետրոսյան Մ. / Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ - Եր. Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004.– 180 էջ)

71. Ի՞նչ ենք հասկանում ակտիվ ուսումնառություն ասելով:

• Ակտիվ ուսումնառության ընթացքում սովորողները սոսկ խոսքով կամ տեսողական տեղեկատվություն ստանալու փոխարեն դառնում են և՛ մասնակից, և՛ կատարող:

(Բաժին 1, Խրիմյան Ա., Հովսեփյան Ա., Մելքոնյան Մ., Էլոյան Ն., Շահիրոջի Ֆ. /Դպրոցի ղեկավարում և կառավարում: Ձեռնարկ դպրոցի տնօրենների համար, ԱՅՌԵՔՍ, Երևան, 2003թ., 296 էջ)

72. Ի՞նչ ենք հասկանում ուսուցում ասելով:

• Ուսուցումը անձնավորության գիտակցությունը ձևավորելու և զարգացնելու հատուկ կազմակերպված գործընթաց է:

(զլ. V, Ղույունյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Ձանգակ-97, 2005թ., 464 էջ)

73. Ի՞նչ ենք հասկանում կարողություն ասելով:

• Կարողությունները գիտելիքներն են գործողության մեջ:

(զլ. V, Ղույունյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Ձանգակ-97, 2005թ., 464 էջ)

74. Ի՞նչ ենք հասկանում հմտություն ասելով:

• Հմտությունները կարողությունների կառուցվածքում ձևավորված գործունեության առանձին դրսևորումների ավտոմատացված տարրերն են:

(զլ. V, Ղույունյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Ձանգակ-97, 2005թ., 464 էջ)

75. Նշվածներից ո՞րի միջոցով է իրականացվում սովորողների առաջադիմության կիսամյակային գնահատումը 2-12-րդ դասարաններում:

• Միավորային գնահատման:

(Բաղդասարյան Ա., Միքայելյան Օ., Նազարյան Ա. /Սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն/, ԳԳ Կրթության և գիտության նախարարություն, 2008թ)

76. Ի՞նչն է բնորոշ համագործակցային ուսուցմանը:

• Առավել արդյունավետ պայմանների առկայությունը սոցիալական հմտությունների ձևավորման համար:

(զլ. 2, Արմատուրյան Ա., Գյուլբուրդյան Ա., Խաչատրյան Ա., Խրիմյան Ա., Պետրոսյան Մ. / Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ - Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004.– 180 էջ)

77. Ո՞րն է սովորողների գնահատման գլխավոր նպատակը:

• Կրթության որակի բարելավումը:

(Բաղդասարյան Ա., Միքայելյան Օ., Նազարյան Ա. /Սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն/, ԳԳ Կրթության և գիտության նախարարություն, 2008թ)

78. Ի՞նչ ենք հասկանում հավակնությունների մակարդակ ասելով:

• Արդյունքների այն մակարդակը, որին ցանկանում է մարդը հասնել տվյալ ժամանակահատվածում, տվյալ գործունեությունն իրականացնելիս:

(զլ 13, Նալչաջյան Ա. ,Հոգեբանության հիմունքներ, Երևան. , «Հոգեբան» հրատարակչություն, 1997թ., 648 էջ)

79. Նշվածներից ո՞րն է արտահայտում «նպատակ» (դասի, գործունեության) հասկացության բովանդակությունը:

• Նպատակը ցանկալի և նախապես կանխատեսելի վերջնական արդյունքն է:

(զլ. V, Ղույունյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Ձանգակ-97, 2005թ., 464 էջ)

80. Ի՞նչ ենք հասկանում կազմակերպության առաքելություն ասելով:

• Առաքելությունը կազմակերպության համար ցանկալի ապագայի մտապատկերն է:

(Բաժին 2, Խրիմյան Ա., Հովսեփյան Ա., Մելքոնյան Մ., Էլոյան Ն., Շահիրոջի Ֆ. /Դպրոցի ղեկավարում և կառավարում: Ձեռնարկ դպրոցի տնօրենների համար, ԱՅՌԵՔՍ, Երևան, 2003թ., 296 էջ)

ՀԱՐՑԱԶԱՐ

81. Ո՞ր հատկությունն է բնորոշ գրեթե բոլոր դեռահասներին:

- Ինքնուրույն լինելու ձգտումը:

(զլ. III, Ղույունջյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար:

Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Չանգակ-97, 2005թ., 464 էջ, Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան, «Հոգեբան» հրատարակչություն, 1997թ., 648 էջ:)

82. Ի՞նչ է նշանակում վճիռ կայացնել:

- Առաջնությունը տալ լուծումներից մեկին, մյուսները ճնշել, հեռացնել վարքի ոլորտից:

(Գլ. 9, Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան., «Հոգեբան» հրատարակչություն, 1997թ., 648 էջ)

83. Ի՞նչ ենք հասկանում գործունեություն ասելով:

- Գործունեությունը գործողությունների շղթա է, որը միավորված է միասնական նպատակով և դրդապատճառներով:

(Գլ. 9, Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան. «Հոգեբան» հրատարակչություն, 1997թ., 648 էջ)

84. Պատիժը ինչի՞ն պետք է ուղղված լինի:

- Շեղումների կանխարգելմանը և ոչ մի դեպքում անձի նսեմացմանը:

(զլ. III, Ղույունջյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Եկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Չանգակ-97, 2005թ., 464 էջ

85. Ի՞նչ ենք հասկանում վարք ասելով:

- Վարքը գործունեության արտաքին, առարկայական, դիտման համար մատչելի դրսևորումն է:

(Գլ. 9, Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան. «Հոգեբան» հրատարակչություն, 1997թ., 648 էջ)

86. Ի՞նչ փուլերից է բաղկացած սթրեսը:

- Տագնապ, դիմադրություն, սպառում:

(Գլ. 9, Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան. «Հոգեբան» հրատարակչություն, 1997թ., 648 էջ)

87. Ի՞նչ է սահմանում հանրակրթության պետական չափորոշիչը:

- Հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, առավելագույն ծավալը, տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրերի շրջանավարտների մերկայացվող ընդհանրական պահանջները և սովորողների գնահատման համակարգը:

(Հանրակրթության պետական չափորոշիչ, ընդհանուր դրույթներ, կետ 1)

88. Ո՞ւմ համար են պարտադիր հանրակրթության պետական չափորոշիչի նորմերը և դրույթները:

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության կառավարման մարմինների, տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր, հատուկ և մասնագիտացված հանրակրթական ծրագրեր (այսուհետ՝ հանրակրթական ծրագրեր) մշակողների և իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ու սեփականության ձևերից և ենթակայությունից :

(Հանրակրթության պետական չափորոշիչ, ընդհանուր դրույթներ, կետ 3)

89. Հանրակրթության պետական չափորոշիչն համապատասխան՝

- Մշակվում են պետական և այլընտրանքային հանրակրթական ծրագրերը:

(Հանրակրթության պետական չափորոշիչ, ընդհանուր դրույթներ, կետ 2.1)

90. Հանրակրթության պետական չափորոշիչն համապատասխան՝

- Փորձաքննության են ենթարկվում հաստատման ներկայացված այլընտրանքային հանրակրթական ծրագրերը:

(Հանրակրթության պետական չափորոշիչ, ընդհանուր դրույթներ, կետ 2.2)

91. Հանրակրթության պետական չափորոշիչն համապատասխան՝

- Կազմակերպվում են հանրակրթական ծրագրերի իրականացումը և դրա պետական վերահսկողությունը:

(Հանրակրթության պետական չափորոշիչ, ընդհանուր դրույթներ, կետ 2.3)

92. Հանրակրթության պետական չափորոշիչն համապատասխան՝

- Գնահատվում են հանրակրթության արդյունքները:

(Հանրակրթության պետական չափորոշիչ, ընդհանուր դրույթներ, կետ 2.4)

93. Ինչպե՞ս է ներկայացվում միջնակարգ կրթության ծրագրերի բովանդակությունը:

- Միջնակարգ կրթության ծրագրերի բովանդակությունը ներկայացվում է առարկայական ծրագրերի միջոցով և հանրակրթության պետական չափորոշիչի համաձայն ներառում է հանրակրթության ընդհանուր նպատակներին համապատասխան ընտրված ու սովորողի կողմից յուրացման համար նախատեսված գիտելիքները, մանկավարժորեն և հոգեբանորեն չափորոշված-հարմարեցված սոցիալական փորձը, մշակութային, բարոյական ու գեղագիտական, ազգային և համամարդկային արժեքները:

(Հանրակրթության պետական չափորոշիչ, բաժին 5, կետ 10)

94. Նշվածներից ո՞րն է ուսումնական բնագավառի ներկայացման կրթության բովանդակային բաղադրիչներից:

- Կարողությունները և հմտությունները:

(զլ. 2, Արնաուդյան Ա., Գյուլբուրդյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Ս. /Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004.– 180 էջ)

95. Նշվածներից ո՞րն է ուսումնական բնագավառի ներկայացման կրթության բովանդակային բաղադրիչներից:

- Արժեքային համակարգը:

(զլ. 2, Արնաուդյան Ա., Գյուլբուրդյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Ս. /Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004.-180 էջ)

96. Ո՞րն է կոլեկտիվ ուսուցման կազմակերպման դեպքում ուսուցման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունը:

- Տարբեր աշակերտներ կարող են զբաղվել տարբեր ուսումնական առարկաներով, ընդմիջումներ անել տարբեր ժամանակահատվածներում:

(Ս.Ա.Սկրտչյան /Կոլեկտիվ ուսուցման տարրերը: Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար/ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Բյուրակն» կրթական համալիր: Երևան 2009թվական)

97. Կոլեկտիվ ուսուցման կազմակերպման դեպքում որո՞նք են ուսումնական խմբի անդամի գործունեության առանձնահատկությունները:

- Սովորող է, սովորեցնող և աշխատանքի կազմակերպող:

(Ս.Ա.Սկրտչյան /Կոլեկտիվ ուսուցման տարրերը: Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար/ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Բյուրակն» կրթական համալիր: Երևան 2009թվական)

98. Ո՞վ է ի պաշտոնե պարտավոր ապահովելու աշխատողների առողջությունն ու անվտանգությունը:

- Աշխատողների առողջության և անվտանգության պահպանությունը պարտավոր է ապահովել գործատուն:

«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդված 243. կետ 2

99. Որքա՞ն պետք է լինի աշակերտների թվաքանակը դպրոցում:

- Այն չպետք է գերազանցի տվյալ շենքի կառուցման կան վերակառուցման նախագծով սահմանված թվաքանակը:

Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման սանիտարական կանոններ N 2.III.4-2...մաս 3.կետ 6

100. Ինչպե՞ս է հաշվառվում ուսումնական սենյակների (դասասենյակներ) տարածքը:

- Ուսումնական սենյակների (դասասենյակներ) տարածքը հաշվառվում է՝ ելնելով 1 աշակերտի համար 2մ²:

Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման սանիտարական կանոններ N 2.III.4-2...մաս 3.կետ 11

Օգտագործված փաստաթղթերի և գրականության ցանկ

- 1.ԼԴՀ Սահմանադրություն
- 2.«Կրթության մասին» ԼԴՀ օրենք
- 3.«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին ԼԴՀ օրենք
- 4.ՀՀ «Քաղաքացիական օրենսգիրք»
- 5.ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք»
- 6.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ԼԴՀ օրենսգիրք
- 7.«Հանրակրթության մասին» ԼԴՀ օրենք
- 8.«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ԼԴՀ օրենք
- 9.«Լեզվի մասին» ԼԴՀ օրենք
- 10.«Երեխայի իրավունքների մասին» ԼԴՀ օրենք
- 11.«Իրավական ակտերի մասին» ԼԴՀ օրենք
- 12.«Տեղական ինքնակառավարման մասին» ԼԴՀ օրենք
- 13.«Նախադպրոցական կրթության մասին» ԼԴՀ օրենք
- 14.«Կրթության պետական տեսչության մասին» ԼԴՀ օրենք
- 15.ԼԴՀ ԿԳԼ կրթության պետական տեսչության կանոնադրություն
- 16.«ԼԴՀ պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն
- 17.«ԼԴՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության կոլեկտիվ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգ
- 18.«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի» կարգ
- 19.Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգ
- 20.Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգ
- 21.Հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի ուսումնական պլաններ
- 22.Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման սանիտարական կանոններ N 2.III.3-2...

Մանկավարժություն և հոգեբանություն

1. Արնաուդյան Ա., Գյուլբուրդյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Ս./ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ - Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004.– 180 էջ:
2. Բաղդասարյան Ա., Միքայելյան Օ., Նազարյան Ա. /Սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն/, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, 2008թ.:
3. Գրիգորյան Յու., Մինասյան Հ. /Հանրակրթական դպրոցի Ֆիզիկական կուլտուրայի առարկայի չափորոշիչ և ծրագիր 1-12-րդ դասարաններ/ ՀՀ ԿԳԼ կրթական ծրագրերի կենտրոն, Երևան 2007թ.:
4. Խրիմյան Ս., Հովսեփյան Ա., Մելքոնյան Ս., Էլոյան Ն., Շահիրոջի Ֆ. /Դպրոցի ղեկավարում և կառավարում: Ձեռնարկ դպրոցի տնօրենների համար, ԱՅՈՒԶՍ, Երևան, 2003թ, 296 էջ:
5. Հանրակրթության պետական չափորոշիչ (նոր խմբագրությամբ՝ 1088-Ն, 28.07.2011թ.):
6. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ. /Համագործակցային ուսուցում: Ձեռնարկ / - Եր.: Անտարես, 2006 թ., 124 էջ:
7. Ղույունջյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Եկու գրքով: Գիրք 1, Գիրք 11 /- Եր.: Չանգակ-97, 2005թ., 464 էջ:
8. Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան. «Հոգեբան» հրատարակչություն, 1997թ., 648 էջ:
- 10.Ս. Ա.Սկրտչյան /Կոլեկտիվ ուսուցման տարրերը: Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար/ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Բյուրակն» կրթական համալիր: Երևան 2009 թվական:

ՊԱՏԻԱՐԱԿԻ ՄՐՑՈՒՅԹԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԻԱՐԱԿԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄՐՅՈՒՅԹԻ ԱՆՅՎԱՅՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՓՈՒԽ ՀԱՐՑԱՇԱՐ

1. Նախադպրոցական տարիքի երեխայի առաջատար գործունեությունն է՝ - խաղը

Յիմք՝ Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Ա. Վ. Պետրովսկու խմբագրությամբ, Ա. Ա. Նալչաջյանի թարգմանությամբ, «Լույս» հրատարակչություն, 1977թ.:

2. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական կրթական հաստատության դաստիարակի պարտականությունը՝ - պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջության ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը

Յիմք՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը նախադպրոցական կրթության մասին», սեպտեմբերի 27, 2006թ., գլուխ 1 :

3. Ինտերակտիվ՝ թարգմանաբար նշանակում է՝ - փոխգործուն

Յիմք՝ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, ԿԱԻ, 2004թ.:

4. Նշված հանրակրթական հիմնական ծրագրերից ո՞րը պարտադիր չէ՝ - նախադպրոցական կրթական ծրագիրը

Յիմք՝ «Կրթության մասին» ԼՂՀ օրենք, Յոդված 16:

5. Նշե՛ք «Երեխայի իրավունքների մասին» ԼՂՀ օրենքի գործողության շրջանակները. - Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սույն օրենքի գործողությունը տարածվում է մինչև 18 տարեկան անձանց վրա

Յիմք՝ «Երեխայի իրավունքների մասին» ԼՂՀ օրենք, Յոդված 1:

6. Տարվա կտրվածքով մանկապարտեզի կրթադաստիարակչական աշխատանքները կարգավորող փաստաթուղթ. - տարեկան աշխատանքային պլան

Յիմք՝ «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», ԳԳ ԿԳՆ, 2010թ. 21.01 N05-Ա/Ք հրաման:

7. «Լեզվի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզուն՝ - գրական հայերենն է

Յիմք՝ «Լեզվի մասին» ԼՂՀ օրենք, Յոդված 2:

8. ԳՈՒՄ նշանակում է՝ - գիտեն, ուզում են իմանալ, սովորեցի

Յիմք՝ Երեխայակենտրոն դասասենյակների ստեղծումը 3, 4 և 5 տարեկան երեխաների համար, «Քայլ առ քայլ» բարեգործական հիմ-նա-դրամ, Երևան, 2004թ.:

9. Նշվածներից ո՞րը երեխայի հիմնական իրավունքը չէ՝ - երեխայի ընտրելու իրավունքը

Յիմք՝ «Երեխայի իրավունքների մասին» ԼՂՀ օրենք:

10. Դաստիարակի թղթապանակի համար անհրաժեշտ փաստաթղթեր՝ - պլանավորման և հաշվառման տետր, ինքնակրթության տետր, ծնո-ղական ժողովների արձանագրությունների տետր

Յիմք՝ «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», ԳԳ ԿԳՆ, 2010թ, 21.01 N05-Ա/Ք հրաման:

11. Աշխատանքային պայմանագիր կնքելիս կողմերի միջև փորձաշրջան կարող է սահմանվել՝ (նշե՛ք սխալ պատասխանը) - եթե աշխատանքի են ընդունվում ընտրովի պաշտոն զբաղեցնողները, ինչպես նաև պաշտոնի նշանակման համար որակավորման քննություններ հանձնած անձինք

Յիմք՝ ԳԳ աշխատանքային օրենսգիրք, Յոդված 91:

12. ԽԻԿ նշանակում է՝ - խթանում, իմաստի ընկալում, կշռադատում

Յիմք՝ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, ԿԱԻ, 2004թ.:

13. ԳԳ աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ գործատուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ (նշե՛ք սխալ պատասխանը) - աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում

Յիմք՝ ԳԳ աշխատանքային օրենսգիրք, Յոդված 113:

14. Դաստիարակի աշխատանքի պլանավորման հիմնական բաղադրիչներն են՝ - մարմնամարզություն, դիտում, աշխատանք, խաղ, պարպում, աշխատանք ծնողների հետ, անհատական աշխատանք

Յիմք՝ «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», ԳԳ ԿԳՆ, 2010թ. 21.01 N05-Ա/Ք հրաման:

15. «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենքի համաձայն մինչև ո՞ր տարիքն է համարվում նախադպրոցական տարիք. - մինչև 6 տարեկանը

Յիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Յոդված 2:

16. Գրաճանաչության, մաթեմատիկայի, արվեստի, շինարարության, խոհարարության, դերային խաղի, բնագիտության, տեխնիկական, սպորտի կենտրոնները միասին կոչվում են՝ - զարգացնող միջավայր

Յիմք՝ Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ, Երևան, ՄԱԿ- մանկական հիմնադրամ, 2011թ.:

17. Աշխատանքային կարգապահության խախտում համարվում է՝ - աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

Յիմք՝ ԳԳ Աշխատանքային օրենսգիրք, հոդված 220:

18. Մանկապարտեզում պարպումներն անցկացվում են՝ - շաբաթական տեղաբաշխման գրաֆիկի և ռեժիմի (կանոնակարգի) համաձայն

Յիմք՝ Այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպումը, Դաստիարակի ուղեցույց, Երևան, 2010թ.:

19. Ո՞ր ժամերին և ո՞ւմ հաշվին է կատարվում պարտադիր բժշկական զննումը - աշխատանքային ժամերին՝ գործատուի հաշվին

Յիմք՝ ԳԳ աշխատանքային օրենսգիրք, Յոդված 249, կետ 6:

20. Նախադպրոցականի մտավոր զարգացման և դաստիարակության հիմքը հանդիսանում է՝ - զգայական դաստիարակությունը

Յիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», ԳԳ ԿԳՆ, 27. 10. 2011թ N 1192-Ա/Ք հրաման:

21. Ներքոնշյալներից ո՞րը «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունն չէ՝ - նախադպրոցական կրթության նպատակը

Յիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Յոդված 2:

23. Այս երևույթը բնութագրվում է աճող սերնդի հոգեկան գործընթացների առավել ինտենսիվ զարգացմամբ (արագընթաց ֆիզիկական և սեռային հասունացում, տեղեկատվական հոսքի կտրուկ ավելացում...)՝ - արքեկերացիա

Յիմք՝ Ս. Մարության, Ա. Դալլաբյան - «Նախադպրոցական մանկավարժություն», 2005, ուսումնական ձեռնարկ:

24. Ստագրոիդ համարվում է՝ - փոխգործուն մեթոդ

Յիմք՝ «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», ԳԳ ԿԳՆ, 2010թ. 21.01 N05-Ա/Ք հրաման:

25. Նախադպրոցական ուսումնական հաստատությունում օդային բարվոք միջավայր ստեղծելու համար իրականացվող օդափոխությունը դադարեցվում է երեխաների խմբաբաժնյակ վերադառնալուց՝ - 30 րոպե առաջ

Յիմք՝ Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների) սանիտարական նորմեր և կանոններ, (Հաստատված է ԼՂՀ առողջապահության նախարարի 2008թ. հոկտեմբերի 13-ի թ. 135-Ն հրամանով):

26. Ուսուցման այդ սկզբունքներն ապահովում են երեխայի զարգացումը, տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառումը և համարվում են՝ - ժամանակակից նախադպրոցական դիդակտիկայի հիմնարար սկզբունքներ

Յիմք՝ «Նախադպրոցական մանկավարժություն», 2005թ , ուսումնական ձեռնարկ:

27. Նախադպրոցական կազմակերպությունների հիմնական շինությունները պետք է ունենան՝ - անմիջական բնական լուսավորում

Յիմք՝ Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների) սանիտարական նորմեր և կանոններ, (Հաստատված է ԼՂՀ առողջապահության նախարարի 2008թ. հոկտեմբերի 13-ի թ. 135-Ն հրամանով):

28. Ձախլիկությունը զարգացման առանձնահատկություն է, որը պայմանավորված է՝ - ուղեղի կիսագնդերի գործունեությամբ

Յիմք՝ «Ձախլիկների զարմանահարշ աշխարհը», Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2009թ.:

29. Նախադպրոցական ուսումնական հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են՝ - Հաստատության և ծնողների միջև կնքվող պայմանագրով

Յիմք՝ «ԼՂՀ նախադպրոցական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն, գլուխ IV, կետ 26:

30. Լոգոպեդական խաղերը միտված են՝ - երեխաների խոսքի շտկողական աշխատանքների իրականացմանը

Յիմք՝ «Լոգոպեդական խաղեր», ԳԳ ԿԳՆ, Կրթության ազգային ինստիտուտ 2009թ.:

31. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական կրթության նպատակը - դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը

Յիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Յոդված 6:

32. Մատների վարժությունները նպաստում են հոգեկան գործընթացներից՝ - ուշադրության, հիշողության զարգացմանը

Յիմք՝ «Հրաշք մատիկներ» - Խ.Արուսյանի անվան ԳՊՄԳ, 2010թ.:

33. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական կրթության նպատակը. - Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը

Յիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Յոդված 6:

ԳՐԱԿՈՐ ՆԱԹՅԱՇԱՐ

34. Բառի հնչյունային վերլուծություն կատարելու կարողության խնդիրը համարվում է՝
- գրաճանաչության մախապատրաստման կարևորագույն խնդիր

Հիմք՝ «Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում», մեթոդական ձեռնարկ, Երևան, 2007թ.:

35. Ո՞ր մարմինն է սահմանում նախադպրոցական ուսումնական հաստատության խմբերի խտությունը.
- կրթության պետական կառավարման լիազորված մարմինը

Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 10:

36. Երեխայի մտածողությունը խթանող հարցերը կոչվում են՝
- բաց հարցեր

Հիմք՝ «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», ՀՀ ԿԳՆ, 2010թ. 21.01 N05-ՍՔ հրաման:

37. Ո՞րն է նախադպրոցական կրթության բնագավառում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի լիազորությունը.
- մշակում, հաստատում և ներդրում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչները

Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 16:

38. Ուսուցման այդ ձևը ենթադրում է ուսումնական ծրագրի տարբեր բաժինների միջև կապերի ստեղծում՝ մեկ հետաքրքիր նյութ ուսումնասիրելու միջոցով.
- թեմատիկ ուսուցում

Հիմք՝ «Այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպումը», Դաստիարակի ուղեցույց, Երևան, 2010թ.:

39. Ո՞րն է նախադպրոցական կրթության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունը.
- ապահովում է նախադպրոցական կրթության ոլորտի պետական քաղաքականության իրականացումը

Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 17:

40. Բառերի բոլոր հնչյունների ճիշտ արտասանությունը, տրամաբանական շեշտերի տեղին օգտագործումը, ծայնի ուժի և խոսքի տեմպի կարգավորումն ապահովում են մայրենի լեզվի ուսուցման կարևորագույն խնդիրներից՝
- հնչարտաբերական ունակությունների զարգացումը

Հիմք՝ Մ. Բաղդասարյան - «Ճիշտ արտասանության ձևավորումը նախադպրոցական տարիքում», 1988թ.:

41. Ո՞ր նորմատիվ փաստաթղթով է սահմանվում նախադպրոցական կրթության բովանդակությունը.
- նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչով

Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 21:

42. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական կրթության նպատակ.
- երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանումն ու ամրապնդումը

Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 6:

43. Այդ խաղերի բովանդակությունը միշտ որևէ մտավոր խնդրի իրականացումն է, և դրանք հիմնականում անց են կացվում դաստիարակի ղեկավարությամբ՝ հստակ կազմակերպված պարապմունքների միջոցով.
- դիդակտիկ խաղեր

Հիմք՝ Սայրենի լեզվի դիդակտիկ խաղեր, Երևան, 2007թ.:

44. Նախադպրոցական կրթական հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն՝
- նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում

Հիմք՝ «ԼՂՀ նախադպրոցական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրություն, գլուխ IV, կետ 28:

45. ԲՄՏ նշանակում է՝
- բազմաբնույթ մտածողության տեսություն

Հիմք՝ «Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում», Այռես, Երևան, 2004թ.:

46. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձինք իրավունք ունեն կրթական ծրագրերին, իրենց զարգացման առանձնահատկություններին և տարիքին համապատասխան ստանալու՝
(նշեք սխալ պատասխանը)
- նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն և հետբուհական մասնագիտական, հիմնական և լրացուցիչ կրթություն համապատասխան ուսումնական հաստատություններում՝ վճարովի հիմունքներով

Հիմք՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 6, կետ 2:

47. Նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարների և մանկավարժների ատեստավորումը կազմակերպվում է՝
- հինգ տարին մեկ

- 54. Ո՞րն է երաժշտության և պարարվեստի ամենակարևոր ընդհանրությունը:
- 55. Ի՞նչ բնույթի երգ-պար է «Պսակ-պսակ» ստեղծագործությունը: Ո՞վ է հեղինակը: Կատարել այն:
- 56. Ի՞նչ է պոլոնեզը: Ինչպե՞ս են անվանում այն: Քանի՞ չափ ունի:
- 57. Ի՞նչ է մագուրկան: Քանի՞ չափ ունի:
- 58. Ի՞նչ է բալետը: Ո՞ր դարում է ստեղծվել դասական բալետը:
- 59. Ո՞րն է հայկական առաջին բալետը, ո՞վ է հեղինակը:
- 60. Ո՞վ է «Ճուտիկ» մանկական օպերայի հեղինակը: Ինչի՞ մասին է այն:
- 61. Ո՞վ է «Պայանե» և «Սպարտակ» բալետների հեղինակը:
- 62. Երգչային ծայրերի ի՞նչ տեսակներ գիտեք:
- 63. Ի՞նչ է սիմֆոնիան: Ո՞ր դարում է ստեղծվել:
- 64. Ի՞նչ է նոտան:
- 65. Ինչպե՞ս են անվանում կարճ տևողությամբ հնչյունը: Կոմիտասի դերը հայկական երաժշտության մեջ:

- 67. Ե՞րբ է ստեղծվել Կոմիտասի անվան լարային քառյակը և ի՞նչ երաժշտական նվագարաններից է բաղկացած:
- 68. Հովհաննես Թումանյանը իր հեղինակած ո՞ր երգի մեջ է գովերգում հայրենի բնության գեղեցկությունը, ծառ ու ծաղկով զարդարված սարերի առավոտը, հովվի շվիի նվագը: Կատարել այն:
- 69. Ո՞վ է Սայաթ-Նովան: Կատարել «Դու եմ հուրին իս» երգը:
- 70. Ո՞ր արվեստի ներկայացուցիչ է Սայաթ-Նովան:
- 71. Ուսումնական ծրագրով ո՞ր սիմֆոնիկ հեքիաթն է ուսումնասիրվում: Ներկայացնել այն:
- 72. «Քեզ համար, Հայաստան» երգի ստեղծման պատմությունը:
- 73. Հ. Թումանյանը՝ երաժշտության և գրականության «պոեզիայի» մասին:
- 74. Ի՞նչ է ռոմանսը: Ե՞րբ է ծագել և որտե՞ղ:
- 75. Ո՞վ է հայկական ռոմանսի նախահայրը:
- 76. Կատարել «Առուն և աղբյուրը» երգ-ռոմանսը:
- 77. Ի՞նչ արվեստ է թատրոնը: Ի՞նչ է նշանակում «թատրոն» բառը:
- 78. Ի՞նչ է կանտատը:
- 79. Տիգրան Չոլխաջյանի ո՞ր ստեղծագործություններն են ուսումնասիրվում 5-րդ դասարանում:
- 80. Ի՞նչ գիտեք ժողովրդական պարերի մասին:
- 81. Ո՞վ է Քիրիստափոր Կարա-Մուրզան:
- 82. Քանի՞ կերպար կա «Լեփո, լե՛, լե՛» երգում: Ովքե՞ր են հեղինակները:
- 83. Ի՞նչ է «ժամրը»: Երաժշտական ի՞նչ ժամրեր գիտեք:
- 84. Ի՞նչ ժամրի ստեղծագործություն է «Տղամարդկանց քայլերգը»:
- 85. Ի՞նչ է սոնատը: Քանի՞ մասից է այն բաղկացած:
- 86. Ի՞նչ է կոնցերտը: Ո՞ր երաժշտության տարածված ժանրերից է: Ե՞րբ է ստեղծվել և որտե՞ղ է զարգացել:
- 87. Ի՞նչ է ինտերվալը:
- 88. Ի՞նչ գիտեք «Դավիթ Բեկ» օպերայի մասին:
- 89. Ի՞նչ է նշանակում «դիրիժոր» բառը: Ի՞նչ գործունեություն է իրականացնում:
- 90. Ի՞նչ է պատարագը: Ո՞ր հեղինակների մշակումներն են նշանավոր բազմաձայնեցման օրինակներից:
- 91. Ո՞վ է «Առաւօտ լուսոյ» հոգևոր երգի հեղինակը: Կատարել այն:
- 92. Ո՞վ է Մակար Եկմայանը: «Հայոց պատարագ»-ից ծրագրային ո՞ր երգն է մշակել Մակար Եկմայանը:
- 93. Ի՞նչ գիտեք դասական երաժշտության մասին:
- 94. Ի՞նչ գիտեք հանրամատչելի երաժշտության մասին:
- 95. Ի՞նչ գիտեք գուսանական և աշուղական երգարվեստի մասին: Ե՞րբ է ծագել այն:
- 96. Ո՞վ է Ջիվանին: Նրա ծրագրային ո՞ր երգին էք ծանոթ:
- 97. Ո՞վ է Յոհան Սեբաստիան Բախը: Ինչպե՞ս է սովորել նվագել երգեհոն:
- 98. Ի՞նչ գիտեք ջազային երաժշտության մասին: Ե՞րբ է ստեղծվել առաջին ջազային նվագախումբը և ո՞վ է հիմնադիրը:
- 99. Ի՞նչ գիտեք ռոք երաժշտության մասին:
- 100. Ինչպե՞ս կազմակերպել տարվերջյան դասը:

ԻՆՖՈՐՄԱՏԻՎ

- 1. Ի՞նչ էք հասկանում ինֆորմացիա ասելով: Ինֆորմացիա ներկայացնելու ինչպիսի՞ ձևեր գիտեք: Որևէ կենդանու օրինակ բերեք և նկարագրեք այդ կենդանու ինֆորմացիա ստանալու ու մշակելու ունակությունները:
- 2. Ի՞նչ է ուսումնասիրում Ինֆորմատիկան: Ինֆորմացիայի ի՞նչ հատկություններ գիտեք:
- 3. Ինչպե՞ս է իրականացվում ինֆորմացիայի ստացումը, փոխանցումը, կուտակումը, պահպանումը, մշակումն ու որոնումը:
- 4. Ի՞նչ է ձեզ հայտնի առաջին մեխանիկական հաշվիչ մեքենաների մասին: Ո՞ր թվականներին ստեղծվեցին առաջին հաշվիչ համակարգերը: Ո՞ր թվականներին ստեղծվեցին առաջին անհատական համակարգիչները:
- 5. Համակարգիչը կառուցվածքային ի՞նչ հիմնական բաղադրիչներ է ներառում: Ինֆորմացիա ներմուծելու և արտածելու համար կիրառվող ի՞նչ համակարգչային սարքեր գիտեք:
- 6. Ի՞նչ հիշող սարքեր գիտեք: Ո՞րն է օպերատիվ և արտաքին հիշողությունների միջև եղած հիմնական տարբերությունները:
- 7. Համակարգչին առնչվելու անվտանգության պահպանման վերաբերյալ մի քանի կանոններ թվարկեք: Համակարգչի բաղկացուցիչ ո՞ր սարքերը կարող են վնասել առողջությանը:
- 8. Ի՞նչ է համակարգչի ծրագրային ապահովումը: Ի՞նչ է նշանակում «օպերացիոն համակարգի բեռնավորում» հասկացությունը:
- 9. Ի՞նչ է ֆայլը, ի՞նչ է թղթապանակը (ֆայլադարան): Ֆայլի անվանման մեջ ընդլայնումն ի՞նչ կարող է բնորոշել:
- 10. Ինչպիսի՞ գործողություններ կարելի է իրականացնել ֆայլային օբյեկտների (ֆայլեր ու ֆայլադարաններ) հետ: Նկարագրեք դրանք:
- 11. Ի՞նչ է համակարգչի աշխատանքային սեղանը

- (Desktop) և ի՞նչ հիմնական բաղադրիչներ է ներառում: Ինչի՞ն են ծառայում Computer և Recycle Bin օբյեկտները:
- 12. Windows համակարգում որո՞նք են պատուհանի հիմնական բաղադրիչները: Պատուհանի ղեկավարման ի՞նչ կոճակներ գիտեք:
- 13. Ընկալման ձևից կախված՝ ինչպիսի՞ նշաններ գիտեք: Ի՞նչ է նշանային համակարգը:
- 14. Ի՞նչ է կողը, ի՞նչ է կողավորումը: Առօրյայում կիրառվող կողավորված ինֆորմացիայի օրինակներ բերեք:
- 15. Ի՞նչ է բիթը: Ինֆորմացիայի քանակի չափման ի՞նչ միավորներ գիտեք:
- 16. Ի՞նչ ալգորիթմով է թիվը երկուական համակարգից փոխակերպվում տասականի (բերել օրինակներ): Ի՞նչ ալգորիթմով է թիվը տասական համակարգից փոխակերպվում երկուականի (բերել օրինակներ):
- 17. Ինչպե՞ս է իրականացվում թվերի գումարումը և հանումը երկուական համակարգում (բերել օրինակներ):
- 18. Ի՞նչ է օբյեկտը: Ի՞նչ է մոդելը, և ինչպե՞ս է արտահայտվում երևույթի կամ օբյեկտի հետ դրա կապը: Բերեք կենսական խնդիրների լուծման համար կիրառվող մոդելների ձևեր օրինակները:
- 19. Ի՞նչ է համակարգչային վիրուսը: Վիրուսի ի՞նչ աղբյուրներ գիտեք: Ի՞նչ տիպի համակարգչային վիրուսներ գիտեք:
- 20. Ի՞նչ է հակավիրուսային ծրագիրը: Հակավիրուսային ծրագրերի ի՞նչ փաթեթներ գիտեք: Նկարագրեք դրանց աշխատանքի սկզբունքները:
- 21. Ի՞նչ է արխիվատորը: Ի՞նչ արխիվատորներ գիտեք: RAR և ZIP արխիվատորների ի՞նչ հատկություններ գիտեք:
- 22. Ի՞նչ է լուկալ ցանցը: Ի՞նչ է գլոբալ ցանցը: Ցանցում համակարգիչները միացնելու ի՞նչ ձևեր գիտեք:
- 23. Ի՞նչ է համացանցը: Ի՞նչ է հիպերհղումը: Թվարկեք էլեկտրոնային փաստաթղթերի Ձեզ հայտնի այն բաղադրիչները, որոնք կարող են հիպերհղումներ հանդիսանալ:
- 24. Համացանցում հասցեավորումը սովորաբար ի՞նչ համակարգով է իրականացվում: Ինչի՞ց են կազմված դոմենները: Մի քանի վարչարարական և աշխարհագրական դոմեններ թվարկեք:
- 25. Համացանցի ի՞նչ ծառայություններ գիտեք:
- 26. Ի՞նչ է որոնման համակարգը: Ձեզ հայտնի մի քանի որոնման համակարգեր թվարկեք:
- 27. Ի՞նչ է էլեկտրոնային փոստը: Ի՞նչ է էլեկտրոնային նամակը:
- 28. Թվարկեք համացանցով հաղորդակցվելու եփկայի և աշխատանքի անվտանգության կարևոր կանոնները:
- 29. Ի՞նչ է համակարգչային ցուցադրումը: Սլայդների դիտման ի՞նչ ռեժիմներ գիտեք:
- 30. Ի՞նչ հաջորդական քայլերով է կարելի նոր ցուցադրում ստեղծել: Սլայդներում տեղադրվող ի՞նչ օբյեկտներ գիտեք:
- 31. Ի՞նչ է անիմացիան: Սլայդից սլայդ անցնելու ի՞նչ ձևեր գիտեք: Սլայդներին անցումային էֆեկտներ տալու ի՞նչ արագություններ են նախատեսված:
- 32. Ինչի՞ համար են նախատեսված այրուբեռն փոփոխելու ծրագրերը: Այրուբեռն փոփոխելու ի՞նչ եղանակներ գիտեք:
- 33. Եջի և պարբերության ձևաչափի ի՞նչ պարամետրեր գիտեք:
- 34. Ինչպիսի՞ աշխատանք կարելի է կատարել տեքստի նշված հատվածի հետ:
- 35. Ի՞նչ է խորագիրը: Ի՞նչ կարելի է զետեղել խորագրերում: Ինչպե՞ս այն տեղադրել փաստաթղթում:
- 36. Ի՞նչ է ծանոթագրությունը: Ի՞նչ է ծանոթագրության նշիչը: Ինչպե՞ս այն տեղադրել փաստաթղթում:
- 37. Ի՞նչ նպատակով են փաստաթղթերում էջանշան տեղադրում: Էջանշանի անվանումը ի՞նչ պայմանաճանաչներ կարող է պարունակել: Ինչպե՞ս այն տեղադրել փաստաթղթում:
- 38. Ի՞նչ է մեկնաբանությունը: Ինչպե՞ս այն տեղադրել փաստաթղթում:
- 39. Ի՞նչ է ոճը: MS Word տեքստային խմբագրիչում ոճերի ի՞նչ տիպեր գիտեք:
- 40. MS Word տեքստային խմբագրիչում ինչպե՞ս են ներմուծում և խմբագրում բանաձևերը:
- 41. Ի՞նչ առավելություն ունի ինֆորմացիայի աղյուսակային ներկայացումը: Աղյուսակների հետ աշխատելու ի՞նչ հիմնական գործողություններ գիտեք:
- 42. Ի՞նչ է էլեկտրոնային թարգմանիչը: Ի՞նչ է էլեկտրոնային բառարանը:
- 43. Բջիջների հասցեավորման ի՞նչ ձևեր կան Excel էլեկտրոնային աղյուսակում:
- 44. Excel էլեկտրոնային աղյուսակում բջիջին կամ բջիջների բլոկին անվանում տալու ի՞նչ ձևեր գիտեք:
- 45. Դիագրամների ի՞նչ տեսակներ կան Excel էլեկտրոնային աղյուսակում:
- 46. Տվյալների ի՞նչ տիպեր գիտեք Excel էլեկտրոնային աղյուսակում:
- 47. Ի՞նչ է բանաձևը: Ի՞նչ կարող է իր մեջ ներառել բանաձևը Excel էլեկտրոնային աղյուսակում:
- 48. Excel էլեկտրոնային աղյուսակում կիրառվող ի՞նչ մաթեմատիկական ֆունկցիաներ գիտեք:
- 49. Ի՞նչ է տվյալների կառուցվածքային-ցուցումը: Ի՞նչ է տվյալների հենքը:

ԲԱՆԱԿՈՐ ՆԱԹՅԱՆԱՐ

- 17. 50. Ի՞նչ աշխատանք կարելի է կատարել աղյուսակի դաշտերի և գրառումների հետ MS Access-ում:
- 51. Ինչպե՞ս է իրականացվում աղյուսակում ինֆորմացիայի որոնումն ու փոխարինումը MS Access-ում:
- 52. Տվյալների բազմասղյուսակ հենքերում աղյուսակների միջև հնարավոր ինչպիսի՞ կապեր գիտեք:
- 53. Ի՞նչ նպատակով և ինչպե՞ս են ստեղծվում ձևերը MS Access-ում:
- 54. Ինչի՞ համար է Queries օբյեկտը MS Access-ում:
- 55. Ինչ նպատակով և ինչպե՞ս են ստեղծվում հաշվետվությունները MS Access-ում:
- 56. Ի՞նչ է ալգորիթմը: Ինչպիսի՞ հիմնական հատկություններով պետք է օժտված լինի ալգորիթմը:
- 57. Ալգորիթմների ներկայացման ինչպիսի՞ ձևեր գիտեք:
- 58. Ո՞ր ալգորիթմներն են անվանում գծային: Այնպիսի խնդիրների օրինակներ բերեք, որոնք կարելի է լուծել գծային ալգորիթմների միջոցով:
- 59. Ո՞ր ալգորիթմներն են անվանում ճյուղավորված: Գծային ալգորիթմների ինչպիսի՞ կառուցվածքներ գիտեք: Լշեք դրանց հիմնական տարբերությունը: Դպրոցական տարբեր առարկաների վերաբերյալ բաղադրյալ պայմանների օրինակներ բերեք:
- 60. Ո՞ր ալգորիթմն են անվանում ցիկլային: Ի՞նչ է ցիկլի մարմինը: Ցիկլային ալգորիթմի ինչպիսի՞ կառուցվածքներ գիտեք:
- 61. Ինչո՞վ են տարբերվում կետային (պատկերացանցային) և վեկտորային գրաֆիկական խմբագրիչները:
- 62. Գրաֆիկական ինֆորմացիայի ներմուծման և արտածման ինչպիսի՞ սարքեր գիտեք:
- 63. Համակարգչում ինչպիսի՞ գույն ձևավորելու հիմունքներ կան: Ի՞նչ գույներ են օգտագործվում RGB մոդելում: Ի՞նչ գույներ են օգտագործվում CMYK մոդելում:
- 64. Adobe Photoshop խմբագրիչում պատկերի նշված տիրույթի հետ կատարվող ինչպիսի՞ գործողություններ գիտեք:
- 65. Adobe Photoshop գրաֆիկական խմբագրիչում նկարչության ի՞նչ գործիքներ են Ձեզ հայտնի:
- 66. Adobe Photoshop գրաֆիկական խմբագրիչում շերտերի հետ աշխատելու ի՞նչ գործողություններ են ձեզ հայտնի:
- 67. CorelDraw գրաֆիկական խմբագրիչում նկարչության ի՞նչ գործիքներ են ձեզ հայտնի:
- 68. CorelDraw գրաֆիկական խմբագրիչում օբյեկտը ներկելու և եզրագծի գույնը սահմանելու ի՞նչ ձևեր գիտեք:
- 69. CorelDraw գրաֆիկական խմբագրիչում թվարկեք օբյեկտների հետ աշխատելու ձեզ հայտնի գործողությունները:
- 70. CorelDraw գրաֆիկական խմբագրիչում հանգույցների հետ աշխատելու ի՞նչ գործողություններ գիտեք: Ի՞նչ է հանգույցը:
- 71. CorelDraw գրաֆիկական խմբագրիչում կորերի հետ աշխատելու ի՞նչ գործողություններ գիտեք: Ինչպիսի՞ համագույներ են լինում:
- 72. Paint գրաֆիկական խմբագրիչում նկարչության ի՞նչ գործիքներ են ձեզ հայտնի:
- 73. Ի՞նչ կառուցվածք ունի HTML-փաստաթուղթ :
- 74. HTML-փաստաթղթի կողմն ինչպե՞ս է իրականացվում տեքստի ձևավորումը:
- 75. HTML-փաստաթղթի կողմն ինչպե՞ս է իրականացվում ցուցակների ստեղծումը:
- 76. HTML-փաստաթղթի կողմն ինչպե՞ս է իրականացվում պատկեր տեղադրելու գործընթացը: WEB-էջերում գրաֆիկական ի՞նչ հիմնական ձևաչափեր են կիրառում:
- 77. Ի՞նչ է հիպերտեքստը: Ո՞ր թեգի օգնությամբ է կարելի հիպերտեքստ ստեղծել:
- 78. HTML-փաստաթուղթի կողմն ինչպե՞ս է իրականացվում աղյուսակների ստեղծումը:
- 79. Ի՞նչ է մուլտիմեդիան: HTML-փաստաթուղթում մուլտիմեդիա-ֆայլ ներդնելու համար որ թեգն է կիրառվում:
- 80. Ի՞նչ է մուլտիմեդիայի ծրագրային և ապարատային ապահովումը: Embed թեգի ի՞նչ հատկանիշներ գիտեք:
- 81. Ի՞նչ է CSS-ը: CSS-ը HTML-ում կիրառելու ի՞նչ մեթոդներ գիտեք:
- 82. CSS-ում տարրերի ու ֆոնի գույնը սահմանելու ի՞նչ հատկանիշներ գիտեք:
- 83. CSS-ում տառաչափի հետ աշխատելու և տեքստ ձևավորելու ի՞նչ հատկանիշներ գիտեք:
- 84. CSS-ում տարրի չափը և դիրքը սահմանելու ի՞նչ եղանակներ գիտեք:
- 85. Ինչի՞ համար են նախատեսված հրատարակչական ծրագրերը: Adobe PageMaker համակարգի հիմնական պատուհանի ի՞նչ բաղադրիչներ գիտեք:
- 86. Ինչպե՞ս է իրականացվում տեքստերի հետ աշխատանքը Adobe PageMaker համակարգում:
- 87. Ինչպե՞ս է իրականացվում պարբերության ձևաչափի սահմանումը Adobe PageMaker համակարգում: Ի՞նչ է բաժանարար գիծը:
- 88. Ինչպե՞ս է իրականացվում գրաֆիկական օբյեկտների կառուցումը Adobe PageMaker համակարգում:
- 89. Ինչպե՞ս է իրականացվում օբյեկտների հետ աշխատանքը Adobe PageMaker համակարգում:

- 90. Ինչպե՞ս է իրականացվում տեքստային բլոկների հետ աշխատանքը Adobe PageMaker համակարգում:
- 91. Ինչպե՞ս է իրականացվում բազմաէջ փաստաթղթերի հետ աշխատանքը Adobe PageMaker համակարգում:
- 92. Ինչպե՞ս է իրականացվում գրաֆիկական օբյեկտների հետ աշխատանքը Adobe PageMaker համակարգում:
- 93. Ի՞նչ են ներկայացնում ծրագրավորման լեզուները: Առաջին ծրագրավորման լեզուները ինչո՞վ կոչվեցին ցածր մակարդակի: Ծրագրավորման բարձր մակարդակի մի քանի լեզուներ թվարկեք:
- 94. Պասկալ կամ C++ լեզվի տարրերը և կառուցվածքը:
- 95. Պասկալ կամ C++ լեզվի թվաբանական և տրամաբանական արտահայտությունները:
- 96. Գծային ալգորիթմների ծրագրավորում. գծային ալգորիթմների ո՞ր հրամաններն ու օպերատորներն են կիրառվում (Պասկալ կամ C++ լեզու):
- 97. Ելուղավորման (պայմանի)/ օպերատոր /Պասկալ կամ C++ լեզու/:
- 98. Կրկնության (ցիկլի) օպերատորներ (Պասկալ կամ C++ լեզու):
- 99. Միաչափ զանգվածներ (Պասկալ կամ C++ լեզու):
- 100. Երկչափ զանգվածներ (Պասկալ կամ C++ լեզու):

ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

- 1. ՀՀ ՁՈւ խնդիրներ են...
- 2. ՀՀ ՁՈւ-ի կառուցվածքը:
- 3. Դատարարական ելությունը, սկզբունքները:
- 4. Դատարարական հիմնական մեթոդները:
- 5. Ուսուցման ելությունը, սկզբունքները:
- 6. Ուսուցման մեթոդները:
- 7. Ուսուցման ձևերը:
- 8. ՀՀ պետական խորհրդանշանները:
- 9. Ե՞րբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը և Ե՞րբ ավարտվեց այն: Քանի՞ հայկական դիվիզիա է մասնակցել Բեռլինի գրավմանը: Ովքե՞ր էին դիվիզիայի հրամանատարները:
- 10. Քանի՞ խորհրդային Միության հայազգի կրկնակի հերոս է տվել հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում: Պատերազմական և հետպատերազմական քանի՞ հայտորդի է ստացել ԽՍՀՄ հերոսի և փառքի երեք աստիճանի շքանշանների ասպետի կոչում:
- 11. Ե՞րբ սկսվեց Արցախյան ազատամարտը և մինչև Ե՞րբ տևեց այն:
- 12. Արցախյան ազատամարտը պայմանականորեն քանի՞ փուլի կարելի է բաժանել:
- 13. Ժամանակակից համազորային մարտի սկզբունքները
- 14. Ժամանակակից համազորային մարտի բնութագիրը
- 15. Ժամանակակից համազորային մարտի տեսակները:
- 16. Ուժերի և միջոցների զորաշարժի տեսակները, կրակի խուսանավման ելությունը:
- 17. Մարտական ապահովման տեսակները:
- 18. ՆՁՊ դասի կառուցվածքը:
- 19. Ստտիրաձգային ջրկի կազմը ՀԱՄ-ով:
- 20. Ստտիրաձգային ջրկի կազմը ՋՓ-ով:
- 21. Ստտիրաձգային ջրկի հնարավորությունները տանկերի ու զրահամեքենաների դեմ պայքարելիս:
- 22. Զինվորի տեղաշարժի ձևերը մարտում:
- 23. Ըստ գործողության բնույթի ինժեներական արգելափակոցները քանի՞ տեսակի են լինում:
- 24. Հակատանկային ականների տեսակներն ըստ տանկերի վրա ունեցած ազդեցության:
- 25. Հակահետևակային ականների դասակարգումը:
- 26. Ի՞նչ է խրամատը, ինչպիսի՞ նպատակով պայմաններ է ստեղծում զինվորի համար: Նկարագրել անհատական խրամատի տեսակները:
- 27. Ի՞նչ է արգելվում հրաձգության ժամանակ և Ե՞րբ է հրաձգությունը անհատալ դարձրելով:
- 28. Կալաշնիկովի ավտոմատի տեսակները, դրանց տարատեսակները:
- 29. Ավտոմատի հիմնական մասերն ու մեխանիզմները:
- 30. Ինչի՞ համար է նախատեսված ավտոմատի փողը, նկարագրել կառուցվածքը:
- 31. Ինչի՞ համար է նախատեսված նշանոցային հարմարանքը, բաղադրիչները և մասերը:
- 32. Սահմանել նշանառության ելությունը: Ի՞նչ է նշանակում «հավասար նշանահատիկ» հասկացողությունը: Ի՞նչ ազդեցություն ունի շնչառությունը և ձգանի սեղմումը դիպուկ հրաձգության վրա:
- 33. Կրակոցի երևույթը և զնդակի թռիչքը: Ո՞րն է կոչվում կրակոցի երևույթ (ալ սահմանումը և պատկերել սխեմատիկորեն)
- 34. Ո՞րն է կոչվում զնդակի հետագիծ, ինչպիսի՞ ուժեր են ազդում զնդակի վրա օդում: Պատկերել սխեմատիկորեն:
- 35. Ինչպիսի՞ դիրքեր է ընդունում ավտոմատավորը տեղից կրակ վարելու ժամանակ:
- 36. Նկարագրել մարտական փամփուշտների կառուցվածքը: Քանի՞ տեսակ են լինում զնդակները ըստ խոցող հատկությունների:
- 37. Ձեռքի բեկորային նռնակների տեսակները: Ձեռքի

- բեկորային նռնակների կառուցվածքը:
- 38. Նկարագրել ձեռքի բեկորային նռնակների լիցքավորման հերթականությունը:
- 39. Որո՞նք են ՀՀ ՁՈւ-ում օգտագործվող կանոնադրություններն ու կանոնակարգերը, նշել Ե՞րբ է հաստատվել և ո՞ր պետական մարմնի կողմից:
- 40. Վաշտի շուրջօրյա վերակարգը, նրա կազմը և նշանակությունը:
- 41. ՀՀ ՁՈւ-ում կիրառվող պատասխանատվության տեսակները:
- 42. Պահակային ծառայություն: Պահակախումբ և նրա կազմը:
- 43. Ի՞նչ է կոչվում պահակակետ: Ո՞վ է կոչվում ժամապահ:
- 44. Ժամապահի անձեռնմխելիությունը:
- 45. Ժամապահի զենքի լիցքավորման կարգը:
- 46. Ժամապահի զենքի լիցքաթափման կարգը:
- 47. Ի՞նչ է կոչվում շարք, շարքի բաղկացուցիչ մասերը:
- 48. Շարքի տեսակները, տողան և շարասյուն:
- 49. Զինծառայողների պարտականությունները շարվելուց առաջ և շարքում:
- 50. Մտտիրաձգային ջրկի երթակարգը:
- 51. Շարային քայլի տեսակները, չափսը, արագությունը:
- 52. Հակատանկային ականների կառուցվածքը:
- 53. Թվարկել շարային վարժակների ուսուցումը կազմակերպելու և անցկացնելու հաջողակամությունը:
- 54. Նշել տեղանքի տարատեսակները:
- 55. Ի՞նչ է տեղագրական քարտեզը, մասշտաբի տեսակները:
- 56. Տեղագրական քարտեզների կոորդինատային և կիլոմետրային ցանց:
- 57. Տեղագրական քարտեզի և կողմնացույցի միջոցով ազիմուտի որոշման հաջողական քայլերը:
- 58. Հեռավորության որոշման եղանակները:
- 59. Հարձակման ժամանակակից սովորական զենքեր:
- 60. Խոցման ոչ ավանդական զենքեր:
- 61. Միջուկային զենք:
- 62. Միջուկային զենքի խոցող գործոնները:
- 63. Քիմիական զենք: Քիմիական զենքի բաղադրամասերը:
- 64. Քիմիական զենքի ըստ մարդու օրգանիզմի վրա ազդեցության թունավոր նյութերի տեսակները:
- 65. Կենսաբանական զենք:
- 66. Անհատական պաշտպանության միջոցների տեսակները:
- 67. Ո՞րն է կոչվում արտակարգ իրավիճակ, տեսակները ըստ բնույթի:
- 68. Միջազգային մարդասիրական իրավունքի ելությունը:
- 69. Ովքե՞ր են համարվում ռազմագերիներ:
- 70. Ռազմագերի չեն կարող համարվել...
- 71. Պատերազմ վարելու արգելված զինատեսակները:
- 72. Ե՞րբ է կազմավորվել ֆիդայական շարժումը: Թվարկել մի քանի ֆիդայիներ:
- 73. Ի՞նչ է հռչակվել «Լեռնահայաստանի հանրապետությունը» և մինչև Ե՞րբ է գոյատևել:
- 74. Ո՞րն է կոչվում ուղիղ կրակոց:
- 75. Ի՞նչ է առաջին բուժօգնությունը (ԱՕՕ):
- 76. Վիրակապերի տեսակները:
- 77. Վնասվածքների տեսակները:
- 78. Վերքեր: Տեսակները:
- 79. Այրվածքներ: Տեսակները:
- 80. ՆՁՊ ծրագրի բաժինները:
- 81. ՆՁՊ պարապմունքի ձևերը:
- 82. ՆՁՊ դասերի տարատեսակները:
- 83. ՆՁՊ ուսումնանյութական բազայի տարրերը:
- 84. ՆՁՊ պլանավորման փաստաթղթերը:
- 85. Մտտիրաձգային ջրկի մարտակարգը:
- 86. Քանի՞ խմբի է բաժանվում բնակչության պաշտպանության միջոցառումների ամբողջությունը, բնութագրել դրանք:
- 87. Սահմանել մարտական իրավիճակներում կողմնորոշման տեսակները:
- 88. Ի՞նչ է զորամասնակը և սղմախը:
- 89. Ովքե՞ր էին Հայաստանի առաջին հանրապետության զինվորական նախարարները, պաշտոնավարման հերթականությամբ և ժամկետներով:
- 90. Թվարկել այդպիսի շրջանառության սուր խանգարումների պատճառները:
- 91. Որո՞նք են ուժեղ ներգործող թունավոր նյութերը:
- 92. Ուժեղ ներգործող թունավոր նյութերի տեսակները:
- 93. Ո՞րն է կոչվում երկրաշարժի հիպոկենտրոն, էպիկենտրոն, օջախի խորություն:
- 94. Ո՞րն է կոչվում հրդեհ և պայթյուն:
- 95. Հակատանկային ականային դաշտ:
- 96. Հակահետևակային ականային դաշտ:
- 97. Ո՞ւմ է շնորհվում «Հայաստանի ազգային հերոս» բարձրագույն կոչումը:
- 98. Ո՞ւմ է շնորհվում «Արցախի հերոս» բարձրագույն կոչումը:
- 99. Շարքային կազմի զինծառայողների համար սահմանված խրախուսանքները:
- 100. Շարքային կազմի զինծառայողներին տրվող կարգապահական տույժերը:

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ

ՖԻԶԿՈՒՍՏՈՒՐԱ

- 1. Ֆիզիկական կուլտուրա առարկայի ուսումնական նյութը բաժանվում է 2 մասի: Որոնք ե՞ն դրանք:
- 2. Քանի՞ մասից է կազմված ֆիզկուլտուրայի դասը:
- 3. Նշել ֆիզկուլտուրա դասի մասերի տևողությունը:
- 4. Թվարկել ֆիզկուլտուրայի բազային ուսումնական նյութերը տարրական դասարանների համար:
- 5. Թվարկել ֆիզկուլտուրայի բազային ուսումնական նյութերը 5-11-րդ դասարանների համար:
- 6. Թվարկել ֆիզիկական կուլտուրա առարկայի ծրագրով նախատեսված մարզախաղերը:
- 7. Քանի՞ ժամ է հատկացված « Գիտելիքների հիմունքներ» ուսումնական նյութի համար տարվա կտրվածքով:
- 8. Քանի՞ ժամ է հատկացված ընտրովի ուսումնական նյութի համար տարվա կտրվածքով՝ 5-11-րդ դասարանների համար:
- 9. Թվարկել այն մարզաձևերը, որոնք ընդգրկված են ընտրովի ուսումնական նյութի մեջ:
- 10. Ուսումնական տարվա կտրվածքով առաջին դասարանի համար քանի՞ ժամ է հատկացված:
- 11. Ուսումնական տարվա կտրվածքով 2-րդ դասարանի համար քանի՞ ժամ է հատկացված:
- 12. Ուսումնական տարվա կտրվածքով 3-4-րդ դասարանների համար քանի՞ ժամ է հատկացված:
- 13. Թվարկել թեստային վարժությունները, որոնք նախատեսված են սեպտեմբեր և մայիս ամիսներին:
- 14. Թվարկել ֆիզկուլտուրայի ուսուցչի պարտադիր փաստաթղթերը:
- 15. Ինչո՞ւ է ֆիզկուլտուրայի ուսուցչին պետք յուրաքանչյուր դասարանի համար պարտադիր ծավալուն թեմատիկ պլանը:
- 16. Ինչո՞վ է պայմանավորված դասի խտության որակը:
- 17. Ֆիզկուլտուրայի ինչպիսի՞ բժշկական խմբեր գոյություն ունեն:
- 18. Ի՞նչ չափորոշիչով է որոշվում դասի խտությունը:
- 19. Ո՞վ և ի՞նչ փաստաթղթեր է կազմվում արտադասարանական միջոցառումների համար:
- 20. Ինչպիսի՞ ֆիզիկական միջոցառումներ են ընդգրկված ուսումնական օրվա ժամանակացույցում:
- 21. Արտադասարանական ֆիզիկական միջոցառումների ինչպիսի՞ տարբերակներ գոյություն ունեն:
- 22. Քանի՞ խնդիր (թեմա) է պետք ներգրավել դասի պլան սեղմագրի մեջ:
- 23. Ի՞նչ է ուսումնասիրում ֆիզդաստիարակության տեսությունը:
- 24. Քանի՞ ժամ է հատկացված «Առողջ ապրելակերպ» դասընթացին:
- 25. Նշել հանդիմանակ հրապարակի չափսերը:
- 26. Նշել վոլեյբոլ մարզաձևի հրապարակի չափսերը:
- 27. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ մարզական միջոցառումների անցկացման համար:
- 28. Ի՞նչ խնդիրներ է հետապնդում դասի ներածական մասը:
- 29. Պարապրոֆի դիրքը մարմնամարզական գործիքի վրա, որի դեպքում նրա ուսերը գտնվում են բռնման կետից ներքև, կոչվում է...
- 30. Պարապրոֆի դիրքը, որի դեպքում ծնկներում ծավալած ոտքերը ձեռքերով ձգվում են դեպի կուրծքը, և դաստակները պահում են ծնկները, մարմնամարզության մեջ կոչվում է...
- 31. Պարապրոֆի դիրքը, որի դեպքում նրա ուսերը գտնվում են հենման կետից բարձր, մարմնամարզության մեջ կոչվում է...
- 32. Ցատկը մարմնամարզական գործիքից կոչվում է...
- 33. Միջոցը, որի օգնությամբ պարապրոֆ կառչում է մարմնամարզական գործիքից, կոչվում է...
- 34. Պատվով շարժումը գլխի վրայով մարմնի առանձին մասերով հենման մասերին հաջորդական հպումով կոչվում է...
- 35. Պարապրոֆի դիրքը ծավալած ոտքերով մարմնամարզության մեջ կոչվում է...
- 36. Մարզաձև, որն ապահովում է ճկունության զարգացման առավելագույն արդյունավետություն, կոչվում է...
- 37. Մարմնամարզության դասերին, ի՞նչ գնահատական է նշանակվում, եթե վարժությունը կատարված չէ:
- 38. Վոլեյբոլ խաղացողը, որը «անցման ժամանակ» գտնվում է առաջին գոտում, տեղափոխվում է ո՞ր գոտի:
- 39. Վոլեյբոլի ընթացքում ինչպե՞ս է իրականացվում խաղացողների տեղափոխությունը մի գոտուց մի այլ գոտի:
- 40. Կարո՞ղ է, արդյոք, վոլեյբոլի թիմի խաղացողը խաղալ առանց կոչիկների:
- 41. Նշել միաժամանակ ֆուտբոլային հրապարակում գտնվող թիմի խաղացողների քանակը:
- 42. Ի՞նչ հաճախականությամբ է անցկացվում ֆուտբոլի աշխարհի առաջնությունը:
- 43. Թեթև աթլետիկայում սպրինտ է կոչվում...
- 44. Թեթև աթլետիկայի տեսակ չէ հեռացատկ, հեռացատկ, բարձրացատկ (նշեք)
- 45. Թեթև աթլետիկայում երկար տարածության վրա վազքում հաջողություն բերող հիմնական ֆիզիկական հատկանիշը կոչվում է...
- 46. Ե՞րբ և ի՞նչ նպատակով է իրականացվում շրջանաձև պարապմունքը:

- 47. Ի՞նչ խնդիրներ է իրականացնում ֆակուլտատիվ պարապմունքը:
- 48. Ինչպե՞ս է որոշվում ֆիզկուլտուրայի դասաժամերին աշակերտների ծանրաբեռնվածությունը:
- 49. Ինչպե՞ս է կարգավորվում աշակերտների ծանրաբեռնվածությունը ֆիզկուլտուրայի դասերին:
- 50. Նշեք ուսումնական օրվա ընթացքում պարտադիր անցկացվող ֆիզկուլտմիջոցառումները:
- 51. Երեխաների ֆիզիկական դաստիարակության գործում ընտանիքի դերը:
- 52. Դպրոցում ֆիզկուլտկուլեկտիվի հիմնական դերը:
- 53. Ի՞նչ փաստաթղթեր պետք է պատրաստի և իրականացնի ֆիզկուլտկուլեկտիվը:
- 54. Բնակչության մեծահասակ մասի հետ իրականացվող խնդիրներն ու ուղղությունները:
- 55. Ի՞նչ է իրենից ներկայացնում հիգիենիկ մարմնամարզությունը:
- 56. Ի՞նչ է ընդհանուր ֆիզպատրաստությունը:
- 57. Անվանեք ընդհանուր ֆիզպատրաստության տեսակները:
- 58. Ո՞վ և որտե՞ղ պետք է պարապի ընդհանուր ֆիզպատրաստությամբ
- 59. Ուսանողների ֆիզդաստիարակության ի՞նչ հիմնական խնդիրներ կան:
- 60. Ի՞նչ է մասնագիտական կիրառական ֆիզպատրաստությունը:
- 61. Ի՞նչ է բուժական ֆիզկուլտուրան:
- 62. Որտե՞ղ է իրականացվում բուժական ֆիզկուլտուրան:
- 63. Ի՞նչ է բժշկական հսկողությունը:
- 64. Որտե՞ղ և ինչո՞ւ է իրականացվում բժշկական հսկողությունը:
- 65. Ինչպե՞ս և ինչո՞ւ է դպրոցում իրականացվում բժշկական հսկողությունը:
- 66. Ֆիզկուլտուրայի բազային ուսումնական նյութերը 1-4-րդ դասարանների համար:
- 67. Ուսումնական տարվա կտրվածքով 5-11 դասարանների համար քանի՞ ժամ է հատկացված:
- 68. Ուսումնական տարվա կտրվածքով 12-րդ դասարանների համար քանի՞ ժամ է հատկացված:
- 69. Քանի՞ քայլ կարող է անել մարզիկը (աշակերտ) հանդիմանալ խաղի ժամանակ՝ առանց գնդակի վարման:
- 70. Քանի՞ մարզիկ (աշակերտ) է ընդգրկված հանդիմանալի ժամանակ:
- 71. Քանի՞ մարզիկ (աշակերտ) է ընդգրկված վոլեյբոլ խաղի ժամանակ:
- 72. Մարմնի ո՞ր մասերն են մասնակցում վոլեյբոլ խաղի ժամանակ:
- 73. Քանի՞ միավորով է ավարտվում վոլեյբոլ խաղը:
- 74. Քանի՞ խաղամասից է կազմված վոլեյբոլ խաղի ընթացքը:
- 75. Թվարկեք աթլետիկայի մարզաձևերի խմբերը:
- 76. Թվարկեք աթլետիկայի սպրինտային մարզաձևերը:
- 77. Թվարկեք աթլետիկայի «Ցատկախմբի» մարզաձևերը:
- 78. Թվարկեք աթլետիկայի «Նետումներ» խմբի մարզաձևերը:
- 79. Թվարկեք աթլետիկայի արգելքներով վազքի ձևերը:
- 80. Եզրափակիչ խաղի 2:2 խաղափուլերի հաշվի ժամանակ ի՞նչ կարգով է որոշվում վոլեյբոլի հաղթող թիմը:
- 81. Ո՞ր դասարաններում է ուսուցանվում «Առողջ ապրելակերպ» դասընթացը:
- 82. Քանի՞ ժամ է հատկացված «Առողջ ապրելակերպ» դասընթացին 9-րդ դասարանում:
- 83. Ի՞նչ մարզասարքեր են անհրաժեշտ հենացատկ կատարելու համար:
- 84. Նկարագրեք «Զգումներ պտտածողի վրա» վարժության ճիշտ կատարումը:
- 85. Նկարագրեք «Գլուխկոնձի» վարժության կատարման ապահովումը (ամվտանգությունը):
- 86. Քանի՞ մարզաձևից է բաղկացած տղամարդկանց մարմնամարզությունը: Թվարկեք դրանք:
- 87. Քանի՞ մարզաձևից է բաղկացած կանանց մարմնամարզությունը: Թվարկեք դրանք:
- 88. Թվարկեք ֆիզդաստիարակության գործընթացում 3 հիմնական խնդիրները:
- 89. Ուստարվա ընթացքում ֆիզկուլտուրայի քանի՞ ժամ է հատկացվում 5-11-րդ դասարանների համար:
- 90. Ուստարվա ընթացքում քանի՞ ժամ է հատկացված 12-րդ դասարանին:
- 91. Քանի՞ մարզիկ (աշակերտ) պետք է ընդգրկվի վոլեյբոլ խաղի ժամանակ:
- 92. Ինչպիսի՞ վարժություններ են իրականացնում դասի սկզբնական (ներածական) փուլում:
- 93. Ի՞նչ խնդիրներ պետք է իրականացվի ֆիզկուլտուրայի դասի հիմնական փուլում:
- 94. Նկարագրեք դասի եզրափակիչ փուլի նպատակները:
- 95. Ուսումնական աշխատանքների բնույթով դասի ի՞նչ տեսակներ կան:
- 96. Ֆիզկուլտուրայի դասերի անցկացման համար ինչպե՞ս պիտի նախապատրաստվի ուսուցիչը:
- 97. Աշակերտի ֆիզիկական վիճակից ելնելով՝ դասի ժամանակ ուսուցիչը ինչպե՞ս պետք է վիզուալ (դիտելով) որոշի

- նրա ծանրաբեռնվածության չափը:
- 98. Ֆիզկուլտուրա առարկայի դասի կազմակերպման ի՞նչ տեսակներ կան:
- 99. Ի՞նչ կարգով է որոշվում վոլեյբոլի հաղթող թիմը եզրափակիչ խաղափուլի 2:2 հաշվի ժամանակ:
- 100. Քանի՞ խնդիր է դրված ֆիզկուլտուրայի դասի համար:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԻԱՐԱԿԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՐԸ ՀԱՄԱԼՐԵՆՈՒ ՄՐՅՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԲԱՆԱԿՈՐ ՓՈՒԼԻ Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

- 1. Նախադպրոցական կրթության նպատակն է.
- 2. Ի՞նչ է իրենից ներկայացնում նախադպրոցական ուսումնական հաստատության խումբը.
- 3. Նախադպրոցական կրթական ծրագրերը նպատակաուղղված են.
- 4. Նախադպրոցական կրթական ծրագրերը երեխայի կյանքի կազմակերպման ինչպիսի՞ ձևեր է նախատեսում.
- 5. Ի՞նչ է ներառում երեխայակենտրոն դաստիարակությունը.
- 6. Որո՞նք են մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի (3-4 տարեկաններ) խաղային գործունեության հիմնական տեսակները.
- 7. Պարապմունքները ըստ բնույթի անցկացվում են.
- 8. Անսվա կտրվածքով քանի՞ պարապմունք է անցկացվում մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբում և յուրաքանչյուրը քանի՞րոպե տևողությամբ.
- 9. Որոնք են պարապմունքների կազմակերպմանը ներկայացվող մանկավարժական պահանջները.
- 10. Ի՞նչ իրենից ներկայացնում համակցված պարապմունքը.
- 11. 5-6 տարեկան երեխաների խոսքի, լեզվամտածողության, գրաճանաչության ուսուցման բովանդակությունը ո՞ր երեք հիմնական ուղղությունների հաշվառմամբ է կառուցվում.
- 12. Ի՞նչ եք հասկանում երեխաների էկոլոգիական կրթություն ասելով.
- 13. Ո՞վ է մանկապարտեզում մանկավարժական գործընթացի հիմնական կազմակերպիչն ու ղեկավարը.
- 14. Ինչպիսի՞ ուղղություններով է կառուցվում երեխաների հետ տարվող աշխատանքների բովանդակությունը.
- 15. Որո՞նք են 5-6 տարեկանների խմբում խոսքի զարգացման խնդիրները.
- 16. Ո՞րն է նախադպրոցական տարիքի երեխայի դաստիարակության նպատակը.
- 17. Ո՞րն է տարրական մաթեմատիկական գիտելիքների ամրապնդման գործում դիդակտիկ խաղերի դերը.
- 18. Մինչև ո՞ր թվանշանի սահմաններում է ուսուցանվում մաթեմատիկական 5-6 տարեկան երեխաների խմբում.
- 19. Ինչպիսի՞ ձևերով է իրականացվում երեխաների երաժշտական գործունեությունը.
- 20. Որո՞նք են կրթության բովանդակության հիմնական բաղադրիչները.
- 21. Ի՞նչ է նախադպրոցական կրթությունը.
- 22. Ի՞նչ է նախադպրոցական ուսումնական հաստատությունը.
- 23. Ի՞նչ է նախադպրոցական տարիքը.
- 24. Որո՞նք են նախադպրոցական տարիքային փուլերը.
- 25. Որո՞նք են դիդակտիկ խաղերի կառուցվածքային բաղադրիչները.
- 26. Ի՞նչ եք հասկանում «խաղը նախադպրոցականի առաջատար գործունեությունն է» ասելով.
- 27. Ո՞րն է երեխայի մտավոր զարգացման և դաստիարակության հիմքը:
- 28. Որո՞նք են դիդակտիկայի ավանդական սկզբունքները:
- 29. Որո՞նք են դիդակտիկայի ժամանակակից սկզբունքները:
- 30. Որո՞նք են աշխատանքային գործունեության կազմակերպման հիմնական ձևերը մանկապարտեզում:
- 31. Որո՞նք են խոսքի զարգացման պարապմունքների խնդիրները:
- 32. Երեխայի զարգացման ո՞ր ոլորտներն են ներառվում նախադպրոցական տարիքի երեխաների կրթության բովանդակության մեջ:
- 33. Ինչպիսի՞ն պետք է լինի ժամանակակից դաստիարակությունը:
- 34. Խաղերի ի՞նչ տեսակներ գիտեք:
- 35. Խոսքի զարգացման ի՞նչ տեսակներ են կիրառվում մանկապարտեզում:
- 36. Ի՞նչ է ներառում երեխայի մտավոր դաստիարակությունը:
- 37. Պարապմունքների ինչպիսի՞ տեսակներ են կազմակերպվում մայրենի լեզվից:
- 38. Ի՞նչ է թեմատիկ ուսուցումը:
- 39. Ի՞նչ աշխատանք է իրականացնում դաստիարակը մանկապարտեզում:
- 40. Որո՞նք են 5-6 տարեկանների դաստիարակության ծրագրային խնդիրները:
- 41. Ի՞նչ է ուշադրությունը: Որո՞նք են ուշադրության տեսակները.

ԲԱՆԱԿՈՐ ՆԱԹՅԱՇԱՐ

- 19. 42. Ի՞նչ է մտազրոհը կամ մտքերի տարափը:
- 43. Որո՞նք են մանկապարտեզում կիրառվող փոխգործուն (ինտերակտիվ) մեթոդները:
- 44. Որո՞նք են տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման ծրագրի բաժինները մանկապարտեզի ավագ խմբում:
- 45. Որո՞ք են երաժշտական գործունեության կազմակերպման ձևերը մանկապարտեզում:
- 46. Որո՞նք են դիդակտիկ խաղերի կառուցվածքային բաղադրիչները:
- 47. Ո՞րն է դիդակտիկ վարժությունների նպատակը:
- 48. Ինչպիսի՞ն է նախադպրոցականի հիշողությունը:
- 49. Շաբաթական քանի՞ պարապմունք են անցկացնում ավագ խմբում:
- 50. Գրաճանաչության պարապմունքները քանի՞ րոպե տևողությամբ են անցկացվում ավագ խմբում:
- 51. Մանկապարտեզի երեխաները սովորու՞մ են գրել տառերը:
- 52. Գրաճանաչության պարապմունքի առաջնահերթ խնդիրներից մեկը:
- 53. Ավագ խմբում խոսքի զարգացումից և գրաճանաչությունից քանի՞ պարապմունք է նախատեսվում շաբաթվա ընթացքում:
- 54. Երեխայի բարեկիրք վարքի կուլտուրայի դաստիարակման համար լավագույն միջոցը:
- 55. Ինչպիսի՞ մեթոդներով ու միջոցներով հասնել երեխաների էկոլոգիական դաստիարակությանը:
- 56. Ֆիզ դաստիարակության խնդիրները:
- 57. Օրվա ընթացքում դաստիարակը ինչքա՞ն ժամանակ պետք է հատկացնի շարժական խաղերին:
- 58. Որո՞նք են ֆիզդաստիարակության հիմնական շարժումները մանկապարտեզում:
- 59. Նկարչության պարապմունքների նպատակը:
- 60. Գեղագիտական դաստիարակության կազմակերպման ինչպիսի՞ ձևեր կան:
- 61. Ինչպիսի՞ կերպարվեստային պարապմունքներ են անցկացվում մանկապարտեզում:
- 62. Ի՞նչ է խաղը երեխայի կյանքում:
- 63. Որո՞նք են աշխատանքային դաստիարակության ձևերը:
- 64. Չեռքի աշխատանքների տեսակները:
- 65. Ի՞նչ գրավիչ ժամանցներ գիտեք:
- 66. Միջին խմբում որո՞նք են տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման բաժինները:
- 67. Միջին խմբում մինչև ո՞ր թվանշաններին են ծանոթանում երեխաները:
- 68. Տարրական մաթեմատիկայից միջին խմբում տարեկան քանի՞ պարապմունք է նախատեսվում:
- 69. Տարրական մաթեմատիկայի պարապմունքները միջին խմբում քանի՞ տեսակ են լինում:

- 70. Ի՞նչ մասերից է բաղկացած միջին խմբի երաժշտության պարապմունքը:
- 71. Ի՞նչ է ինտերակտիվ մեթոդը:
- 72. Կրթական գործունեության կազմակերպման ձևերը:
- 73. Ի՞նչ կուլտուրիզացիոնիկ կարողություններ պետք է ունենա 2-3 տարեկան երեխան:
- 74. Ի՞նչ մասերից է բաղկացած ֆիզկուլտուրայի պարապմունքը, բնութագրիր մասերը առանձին-առանձին:
- 75. Ի՞նչպիսին պետք է լինի 2-3 տարեկան երեխաների խոսքի քերականական կառուցվածքը:
- 76. Պարապմունքը հոգնեցուցիչ չլինելու համար դաստիարակը ընթացքում ի՞նչ մեթոդներ կարող է օգտագործել:
- 77. Ինչպե՞ս պահպանել երեխայի ակտիվության հաշվեկշիռը պարապմունքների ընթացքում:
- 78. Բարեկիրք վարքի դաստիարակման կանոնները միջին խմբում:
- 79. Ինչպիսի՞ խաղեր կարելի է անցկացնել միջին խմբում:
- 80. Պարապմունքների ինչպիսի՞ տեսակներով կատարելագործել երեխաների լեզուն:
- 81. Մաթեմատիկայի պարապմունքներին առաջադրվող խնդիրները միջին խմբում:
- 82. Երաժշտական պարապմունքների առջև դրվող խնդիրները միջին խմբում:
- 83. Ի՞նչ նպատակ են հետապնդում կերպարվեստի պարապմունքները մանկապարտեզում:
- 84. Աշխատանքային դաստիարակությունը միջին խմբում:
- 85. Ի՞նչ մեթոդների միջոցով դաստիարակը կարող է աշխատել ծնողների հետ:
- 86. Ի՞նչ է նշանակում դաստիարակել երեխային:
- 87. Երեխայի կյանքի կազմակերպման գլխավոր ձևերից մեկը խաղն է: Ի՞նչ է զարգացնում այն նախադպրոցական երեխայի մեջ:
- 88. Ավագ խմբի երեխայի դաստիարակության բովանդակությունը կազմող խնդիրները:
- 89. Բարեկիրք վարքի ինչպիսի՞ կարողություններով պետք է օժտված լինի ավագ խմբի երեխան:
- 90. Ի՞նչ է նշանակում անվտանգ վարքագիծ:
- 91. Ինչպիսի աշխատանքային կենտրոններ պետք է ունենա դաստիարակը խմբասենյակում:
- 92. Եկոլոգիական դաստիարակության խնդիրները:
- 93. Ինչպիսի՞ էկոլոգիական խաղեր գիտեք:
- 94. Ավագ խմբի ֆիզիկական դաստիարակության խնդիրները:
- 95. Ո՞րոնք են ֆիզիկական դաստիարակության տարբերակները:
- 96. Մտավոր դաստիարակության հիմնական խնդիրները:
- 97. Խոսքի զարգացման խնդիրները ավագ խմբում:
- 98. Մայրենի լեզվի պարապմունքների տեսակները:

- 99. Խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակում ավագ խմբում:
 - 100. Ավագ խմբի երեխաների խոսքի քերականական կառուցվածքի ձևավորում:
- Գրականություն*
- ԼՂՀ օրենքը «Նախադպրոցական կրթության մասին»
 - ԼՂՀ ԿԳ նախարարության տեղեկագիր, 2011թ.
 - Նախադպրոցական հաստատության կառավարումը /մեթոդական ձեռնարկ/ 2008թ., Երևան
 - Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի կրթական համալիր ծրագիր, 2011թ. Երևան
 - Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր, 2011թ., Երևան
 - Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, 2007թ., Երևան
 - Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերը մանկապարտեզում /ավագ խումբ/, 2007թ., Երևան
 - Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում, 2007թ. Երևան
 - Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում, 2007թ. Երևան
 - Ֆիզիկական դաստիարակությունը մանկապարտեզում, 2011թ. Երևան
 - Երեխաների տրամաբանական և տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը, 2015թ., Երևան
 - Դաստիարակենք անվտանգ վարքագիծ, Ջուլիետա Թադևոսյան, 2003թ. Երևան
 - Նկարչությունը մանկապարտեզում, Ջինա Դաբադյան, 1999թ., Երևան
 - Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում /մեթոդական ուղեցույց/, 2007թ., Երևան
 - Ֆիզիկական դաստիարակությունը մանկապարտեզում, 2011թ., Երևան
 - Մաթեմատիկայի իմ այրուբներ /մաս 1, ուսումնամեթոդական ձեռնարկ/, 2007թ., Երևան
 - Դպրոցի շենին, Ա. Դովհաննիսյան, 2007թ., Երևան
 - Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր, 1999թ., Երևան
 - ԼՂՀ ԿԳ նախարարի 13 հունիսի 2011թ. N 113-Ն հրամանը «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչները հաստատելու մասին» - Տեղեկագիր, 2011թ.
 - Նախադպրոցական մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ, 2005թ.
 - Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Ա.Վ. Պետրովսկու խմբագրությամբ, Ա. Ա. Նալչաջյանի թարգմանությամբ, «Լույս» հրատարակչություն, 1977թ.
 - Ա. Նալչաջյան, Ս. Մկրտչյան, «Հոգեբանության ներածություն»-8, 2001թ., Երևան:

ՆԱԴԹՈՒՄ Է ՈՉ ԹԵ ՆԱ, ՈՎ ՈՒԺԵՂ Է ԲՈԼՈՐԻՑ,



պարապողի զարգացման մեջ հետաքրքրություն, իր գիտելիքներով կիսվելու ցանկություն, կոլեկտիվում բարենպաստ պայմաններ ստեղծելու կարողություն. ահա գրագետ մարզչի հիմնական հատկությունները, որի աշակերտները հասնում են բարձր արդյունքի:

Այդ հատկություններով է օժտված ՄՊՄԳ բռնցքամարտի մարզիչ Նարեկ Աբրամյանը, որի մարզչական թելի տակ կոփվում են 7-18 տարեկան շուրջ 80 մարզիկներ Ստեփանակերտում, Ասկերանում եւ Մարտակերտի շրջանի վանք համայնքում:

Նարեկ ԱԲՐԱՄՅԱՆԸ բազմիցս բռնցքամարտել է Ռուսաստանի Դաշնությունում, եղել է այդ երկրի քաղաքացի: Ստավրոպոլի երկրամասի բռնցքամարտի հնգակի չեմպիոն է, Հարավային Դաշնության վարչաշրջանի չեմպիոն, ՀՀ 2011թ. բռնցքամարտի առաջնության ֆինալիստ: 2010-2012թթ. եղբոր հետ, որը նույնպես բռնցքամարտիկ է, հանդիսացել են ՀՀ բռնցքամարտի հավաքականի անդամներ: Որպես բռնցքամարտիկ ստացել է ՌԴ սպորտի վարպետի կոչում: Շուրջ տասներկու տարի է, ինչ բնակվում է Արցախում եւ մարզում արցախցի երեխաներին:

Ցանկացած մարզածելով արդյունավետ մարզվելու գործընթացում մեծ դեր ունի մարզիչը: Շատ բան կախված է մարզչի անձնական գծերից: Այս պնդումը լրիվությամբ կիրառելի է բռնցքամարտում. չէ՞ որ մարզիկի համար մարզիչն ավելին է, քան հասարակ մարդ, որը ցույց է տալիս հնարները: Մասնագիտացված մարզիչն առաջին հերթին լավ մանկավարժ է, հետո՝ նոր՝ լավ մարզիկ: Նրա համար չկան լավ կամ վատ աշակերտներ: Հավասար վերաբերմունք, յուրաքանչյուր

- Նարեկ, հե՞շտ է մարզչական գործը:

- Մարզիչ լինելը հեշտ գործ չէ: Դա ավելի շատ ուղեղի աշխատանք է, որը պետք է մշտապես աշխատեցնել: Միեւնույն ժամանակ պետք է կարողանալ անջատել ուղեղն անհրաժեշտության դեպքում: Տարբեր երեխաներ են գալիս պարապելու: Պետք է նաեւ սառնասիրտ լինել մի քիչ, որ կարողանաս ճիշտ դիտողություն անել: Ինչքան էլ դժվար լինի, այնուամենայնիվ, մարզիչը կարողանում է գտնել ճիշտ մոտեցում յուրաքանչյուր մարզիկի համդեպ: Մարզիկը պետք է ընդունի մարզչի ասածը որպես ինֆորմացիա, որը իրեն պետք է: Դրա համար մարզիչը ներդրում է իր գիտելիքները, փորձը եւ ուշադրություն է դարձնում բոլորին: Գաղտնիք չէ, որ ծույլ երեխաները սպորտում երկար չեն ձգում: Ես աշխատում եմ տարբեր բնավորությամբ երեխաների հետ, աշխատում եմ բոլորին լավ մարզիկներ դարձնել: Երբեմն շատ խիստ եմ, բայց չեմ խփում: Բառերն էլ բավական են ինձ:

- Լավ մարզիչ լինելու համար ի՞նչ է անհրաժեշտ:

- Լավ մարզիչ լինելու համար, նախեւառաջ, անհրաժեշտ է կայուն մարզչական աշխատանք: Մարզիչը պետք է ուղիղ առաջ գնա իր գործի մեջ՝ առանց ձայն ու աջ նայելու: Պատահում է, որ որեւէ սանի հետ մեծ հույսեր ես կապում, քրտնաջան աշխատում հետը, իսկ նա տեղափոխվում է ուրիշ տեղ կամ ուրիշ մարզածե է նախընտրում: Նման դեպքում դժվար է լի-

նում մարզչի համար այն առումով, որ այդպես էլ չի վայելում իր աշխատանքի արդյունքը: Բայց դա չպետք է կոտրի մեզ: Մենք միշտ առաջ ենք գնում, մարզչի ուղին անշեղ է: Սպորտում ասում են, թե հաղթում է ոչ թե նա, ով ուժեղ է բոլորից, այլ նա, ով գնում է մինչեւ վերջ: Մարզիչը պետք է նվիրված լինի իր գործին, իր մարզածեին: Լավ մարզիչը գործով է երեւում, ոչ թե խոսքով:

- Չեր դեպքում արդյունքը ցայտում է հատկապես այն առումով, որ Չեր սաները հաճախակի հոշակվում են միջազգային առաջնությունների մրցանակակիրներ: Հուլիսի սկզբին կայացած Եվրոպայի բռնցքամարտի առաջնության արդյունքն էլ էր այդ շարքից: Կմանրամասնե՞ք:

- Իմ սաների մեջ կան տաղանդավոր բռնցքամարտիկներ, որոնց հետ համատեղ մեր համառ աշխատանքն արդյունք է տալիս: Տասնյոթամյա բռնցքամարտիկ Մանվել Պետրոսյանը ՀՀ բազմակի չեմպիոն է, Եվրոպայի բրոնզե մեդալակիր: Տասնչորսամյա բռնցքամարտիկ Էրիկ Առստամյանը նույնպես ՀՀ երկակի չեմպիոն է: Եվրոպայի առաջնությունում բրոնզե մեդալ է նվաճել: Նախքան Թբիլիսի գնալը, որտեղ պետք է կայանար Եվրոպայի պատանիների միջեւ Եվրոպայի առաջնությունը, Էրիկ Առստամյանը ՀՀ բռնցքամարտի առաջնությունում հինգ մարտ է հաղթել: 45 կգ քաշով մրցել է մինչեւ 46 կգ քաշային կարգում: Չնայած այն հանգամանքին, որ մրցակիցներն իրենից

ԱՊՐԵԼՈՒ ԱՐՑԱՆ

ՆԱ ԶԵՆՔԻ ՇԵՏ ՊՍԱԿՎԵԼՈՒ ԵՐ ԳՆՈՒՄ



Երբեք տող գրելուց, մտքերիս հետ երկ- խոսության մտնելուց այսքան չեմ սարսա- փել, ծանրացող ծյան պես, հիշողությունն ինձ երբևէ այսպիսի անմշակ տարածքներ չի տարել... առհասարակ ո՛չ ես և ո՛չ էլ քեզ ճանաչողները հազար տարի հետո էլ իրենց իրավունք չեն վերապահի քո մասին խոսել կամ գրել անցյալով: Ինձ համար ժամանակի տարածության մեջ դու իմ մանկության օրերի ամենալուսավոր կեր- պարն ես:

2003-ի աշնանը, իսկ եթե ավելի հստակ՝ սեպտեմբերի 1-ին մենք առաջին անգամ իրար ձեռք սեղմեցինք, սկզբից որպես դա- սընկերներ, իսկ հետագայում արդեն այդ ձեռքսեղմումը դարձավ ընկերության սկիզբ: Ուղիղ 18 տարի առաջ ես իմ կյան- քում արձանագրեցի մի մեծ ձեռքբերում. դա քեզ ճանաչելն էր, դա Արթուր Աղասյան մարդու հետ ճանապարհ անցնելն էր:

Քո տարբերվող տեսակը դեռ դպրոցա- կան տարիներին անթաքույց երևում էր: Վիճարկելի չէ այն փաստը, որ բոլորը դա- րոցում ճանաչում էին քեզ՝ փոքրամարմին Աղասյանի: Թվացյալ բաժանումը, որքան էլ ճակատագրորեն ընդարձակվի, միև- նույն է՝ քեզ երկրպագողների, այո՛, երկր- պագողների գորաբանակը չի նստարան:

Անկեղծ ասես, ի սկզբանե որոշել էի քո կերպարի բնութագրմամբ սկսել այս մենա- խոսությունը, բայց հետո հասկացա, որ հաստատիր բառարաններ պիտի փորփո- րեմ, որպեսզի կարողանամ զոնե մի քիչ մոտենալ քո բացառիկությանը... Գիտե՞ս, ընկեր, երբ տարիներ առաջ մենք մեր դա- րոցական տարիներին հիմնած «ԱՎՈՅԱ- ԿԱՆՆԵՐ» խմբի գրասենյակում գրուցում էինք խաղաղության ու չխաղաղության մասին, դու միշտ այն համոզումներն էիր, որ այդ երկու երևույթներն իրար լրացնում են: Դպրոցական տարիներին, այդ գրույց- ների ընթացքում մեզ երբեմն թվում էր, թե ամեն ինչ մի քիչ պաթոսով ենք ընկալում և ներկայացնում, բայց այսօր ես այդ կար- ծիքին չեմ. դեռ այն տարիներին դու արդեն մոտենում էիր մի սահմանագծի, որից այն կողմ անմահությունն է, հավերժությունը:

Մարտունու մանկապատանեկան մար- զադպրոցի շենքը, որ նախկինում Սայաթ- Նովա կինոթատրոնի շենքն էր, մեր՝ «ԱՎՈ- ՅԱԿԱՆՆԵՐ» խմբի հասցեն էր: Հիշում եմ, այնտեղ մեր կազմակերպած միջոցառում- ներն ու պատանեկան հանդիպումները վերջում վերածվում էին ուժեղ բանավեճի, մենք համոզված էինք, որ կարևոր և օգտա- կար գործ ենք անում և, անհամեստություն չքվա, դա այդպես էլ կար: Հիմա ամեն օր, երբ այնտեղով անցնում եմ, քայլերս ինձ-

նից անկախ դանդաղում են, քո ծայրը մի- անգամից միակ լսելի երևույթն է դառնում, երբեմն ուզում եմ գնալ, գտնել այն սեն- յակն ու աշխարհից կտրվել: Հիմա քեզ հետ գրուցելու, քննարկելու թեմաներն ավելի շատ են, ու, ավելորդախոսությու- նից զերծ մնալով, ասում եմ՝ բացի քեզնից ոչ ոքի հետ այսօր պատրաստ չեմ անգամ այդ հարցերի քննարկման եզրերը գտնել:

Ընկեր, ես համոզված եմ, որ հաղթող- ներն իրականում քեզ նման են լինում, հա- մազգային կերպարի վերածված քո անձը սերունդների համար օրինակի է վերածվել, մեծից փոքր բոլորի շուրթերին Արթուր անունն է:

2016-ի ապրիլյան քառօրյա պատերազ- մից հետո, երբ ամենուր քո քաջագործու- թյունների մասին էին խոսում, հեռուստա- կրանին հաճախակի հայտնվող՝ արդեն լեյտենանտ Աղասյանի մասին պատմող կարդերը պատմագրության մոր սկզբի են վերածվել մեզ համար: Մեզնից յուրա- քանչյուրը, ով գոնե մեկ անգամ առիթ է ու- նեցել շփվել քեզ հետ, վստահ էր, որ դու ի վերջո դառնալու ես մեր համազգային պայքարի խորհրդանիշներից մեկը... և չս- խալվեցինք:

Զինվորական ծառայության ընթացքում մեր հանդիպումները, բնականաբար, ավե- լի ուշ-ուշ էին տեղի ունենում: Համազգես- տիդ այնքան էիր սիրահարված, որ ընդա- մենը մի քանի ժամով, լավագույն դեպքում մեկ օրով էիր գալիս Մարտունի: Քո ամեն այցն ինձ համար տոն էր, գիտե՛ի, որ ուր որ է՝ պիտի զանգես և ասես, որ գալիս ես մեր տուն, և մենք մինչ ուշ երեկո պիտի գրուցե- ինք: Հիշում եմ, մեր վերջին հանդիպմանը մեր տնից գնացինք Մարտունու Հաղթա-

նակի հրապարակ՝ քայլելու: Դա գիշերվա 2-ն անց էր, ուժեղ անձրև էր գալիս, բայց մենք գրուցում և վայելում էինք գիշերային լռությունն ու անձրևը... Երանի՛ այդ օրը կրկնելու հնարավորություն չի...

Արթուր, եղբայր, նույնիսկ բառերդ եմ հիշում, երբ վերջին անգամ քեզ հարցրի, թե ինչու չես ամուսնանում, ասացիր.

- Համազգեստիս սիրահարվալում բոլա, մին մարդ մի քանե հետ սիրահարվել չի:

Այն ժամանակ և՛ ես, և՛ դու ծիծաղում էինք՝ պատկերացում չունենալով անգամ, որ դու պատմության մեջ մոր փաստ էիր արձանագրում:

44-օրյա պատերազմը քո ամեն ասած բառի ճշմարտացիությունը անջնջելի փաստի վերածեց... Երբ հոկտեմբերի 7- ին՝ իմ ծննդյան օրը, մեր հայրենիքի հա- մար զարկվածների ցուցակում հայտնվեց նաև քո և կրտսեր եղբորդ՝ Արսենի անունը, իրականությունը վերածվեց ապրելու պարտադրանքի, ես այդ ժամանակ մի փոքրիկ գրառմամբ ասացի, որ առաջնելկս քո անունն է կրելու: Հետո, երբ տեղեկա- ցանք, որ չեն գտնում քեզ և հնարավոր է՝ դու... հայրդ ավելի քան համոզված էր, որ Արթուր Աղասյան զինվորականին ոչ ոք չէր կարող գերի վերցնել, դա անկարելի էր:

Զգիտեմ, եղբայր, ասելիքս այնքան շատ է, որ մենակ մնալուց վախենում եմ... ուզում եմ խոսքս ավարտել հայտնի երգի տողերով.

*Վեր կաց, եղբայր իմ, երգս կիսեմ
քեզ հետ,
Վեր կաց, եղբայր իմ, ցավը կիսենք
մեկտեղ...*

Սերգեյ ՍԱՖԱՐՅԱՆ

ԱՅՆ ՆԱ, ՈՎ ԳՆՈՒՄ Ե ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ



ծանր էին, երկը կարողացավ հաղթել: Նա առաջին ան- գամ է աշխատել ավագ պատանիների տարիքային խմբում: Երեւանում մասնակցել է երկու մարզական հա- վաքների, եւ ուղեւորվել ենք Թբիլիսի՝ Եվրոպայի առաջ- նության: Առաջին մենամարտը թուրք բռնցքամարտիկի հետ էր: Բացարձակ առավելությամբ հաղթանակը տրվում է մեզ՝ շնորհիվ երկի փայլուն բռնցքամարտե- լուն: Երկրորդ մարտը ռումինացու հետ էր, որին նույն- պես հաղթում է երկը: Երրորդ մարտը Վրաստանը ներ- կայացնող հայ մարզիկի հետ էր: Իմ կարծիքով, այդ մար-

տում եւս առավելությունն երկիինն էր, բայց մրցավարա- կան կազմը հաղթանակը տալիս է մեր մրցակցին: Այդպի- ոսով, երկի Առստանյանը վաստակում է բրոնզե մեդալ: Առաջին անգամ է մասնակցել Եվրոպայի առաջնության:

- Նարեկ, իսկ ինչո՞ւ նախապատվությունը տվել եք բռնցքամարտին:

- Բռնցքամարտի հանդեպ սեր ունեի դեռ երեխա ժա- մանակից: Եթե ավելի կոնկրետ լինեմ, ապա սեր ունեի կռվելու հանդեպ: Քանի որ շատ էի կռվում, պետք է ուժեղ լինեի: Դրա համար գրանցվել եմ բռնցքամարտի խմբակում: Պարապելով հասկացել եմ, որ գրագետ կռվել կարելի է ռինգում: Այդ ժամանակ Ռուսաստանի Դաշնությունում էի: Մասնակցում էի մրցաշարերի: Տարի- ներ հետո ընտանիքով հանձնեցինք մեր քաղաքացիու- թյունը եւ տեղափոխվեցինք հայրենի Արցախ: Երբ եկանք, տեսա, որ այստեղ բռնցքամարտ չկա: Նկատելով արցախցի երեխաների մոտ սպորտի հանդեպ սեր եւ զգալով մեծ ներուժ՝ որոշեցի բացել բռնցքամարտի խումբ: 2010 թվականից զբաղվում եմ մարզչությամբ:

- Հայտնի է, որ արտերկրից առաջարկներ եք ստացել Արցախում գործունեությունը թողնելու եւ ուրիշ երկրում ավելի մեծ գումարների դիմաց շարունակելու մասին, բայց մերժել եք: Ի՞նչն է պատճառը:

- Ես չեմ մտածում Արցախը լքելու մասին, հակառակը, ուզում եմ մնալ այստեղ եւ իմ կարողացածով նպաստել մեր երկրի զարգացմանը: Հիմա մենք դժվար ժամանակ- ներ ենք ապրում, շատերն անորոշության մեջ են, չզիտեն գնա՞ն, թե՛ մնա՞ն: Վստահ եմ, որ հենց որ ես դուրս եկա, որոշներն էլ կհետեւեն իմ օրինակին: Չգնալու պատճառ- ներից մեկը դա է: Պետք է մնանք եւ պաշտպանենք մեր պապական հողերը, մեր գերեզմանները: Այստեղ եմ իմ ընտանիքները: Ինչո՞ւ եմ ասում ընտանիքներ, որովհե- տեւ ես երկու ընտանիք ունեմ: Առաջինն իմ հարազատ-

ներն են, մյուսը՝ իմ բռնցքամարտի ընտանիքը: Պատե- րազմից հետո ծնվեց որդիս, որին տվել եմ 44-օրյա պա- տերազմում զոհված իմ հրամանատարի՝ բոլորին քաջ ծանոթ «Ցոր-ի Սաշկո»-ի (Ալեքսանդր Հարությունյան՝ պահեստագործի կապիտան, հետախուզական վաշտի 1- ին դասակի հրամանատար) անունը: Ինքս մասնակցել եմ պատերազմին, հարկ եղած դեպքում էլի կմասնակ- ցեմ: Մենք պետք է վառ պահենք մեր նահատակների հիշատակը եւ պատրաստ լինենք իրավիճակի ցանկա- ցած զարգացման: Դրա համար պետք է մնալ հայրենի- քում:

- Առաջիկայում ի՞նչ ծրագրեր ունեք:

- Մեծ ծրագրեր ունենք՝ կապված Եվրոպայի մրցանա- կակիր մարզիկների հետ: Ուզում ենք նախապատրաստ- վել պրոֆեսիոնալ ռինգ դուրս գալու համար: Նշեմ, որ պրոֆեսիոնալ մարտերին կարող եմ մասնակցել սկսած 18 տարեկանից: Մեր մարզիկներն ունեն բոլոր նախադր- յալները պատրաստվելու համար: Մենք աշխատում ենք դուրս գալ արտերկիր, մասնակցել Եվրոպայի, աշխարհի առաջնությունների եւ բարձրացնել մեր վարկանիշը: Պատկերացրեք, արցախցին դառնում է պրոֆեսիոնալ չեմպիոն: Այդպիսով ոչ միայն խոշոր գումար ենք վաս- տակում, այլեւ մեկ մարզիկը խոսում է ամբողջ ազգի փո- խարեն: Թող իմանան, որ Արցախում ապրում են ուժեղ եւ խելացի մարդիկ: Մենք պետք է ամեն ինչ անենք, որ այս- տեղ ապրենք: Մենք հպարտ ու չհանձնվող ազգ ենք, եր- բեք չպետք է թուլանալ: Բռնցքամարտում էլ է այդպես, հենց մի փոքր թուլացար, պարտվում ես: Հետո երկար պետք է աշխատես սխալներիդ վրա, հասկանաս պար- տության պատճառը: Նույնը եւ մեր դեպքում, մենք դեռ շատ անելիքներ ունենք, պետք է ուժեղանանք եւ երբեք չհանձնվենք:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԷՍԲԻՉՆԵՐ

ՄԵՐ ԳՅՈՒՂԻ ՄԱՐԴԻԿ



Ալեքսանդր ԽԱՉԱՏՐՅԱՆԸ՝ ֆիզկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ծնունդով Ասկերանի շրջանի Խնապատ գյուղից, ապրում և աշխատում է Երևանում, ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի ինստիտու-

ՊՐՈՒՄԱՆՑ ՋՈՒՄԵՆՈՒՂ

Պրումանց Ջունշուղը (Հակոբյան Ջունշուղ) կարճահասակ, ամրակազմ, ջլապինդ տղամարդ էր, մասնագիտությամբ՝ որմնադիր: Պատմում են, որ մի անգամ, երբ պատ էր շարում, դիմում է քար ու շաղախ տվող երիտասարդ բանվորին (փահլան) ու ասում.

- Բալա՛, բալա՛, մին էդ քարը հողըցեն մաչան յոր կալ տեն տիր:

Երիտասարդը, տեսնելով քարը, նրա չափերը, դիմում է ուստա Ջունշուղին:

- Ուստա՛, էդ շուլուղը ըստ անունի՞ս: Էդ քարը տեղան տմբքան կընի՞, վեր ասում ըք:

Ուստա Ջունշուղը առանց վարանելու իջնում է իր տախտակամածից, հանգիստ գրկում ահռելի քարը ու դնում կողքի՝ զարմացնելով բոլորին:

Չնայած տարիքն առել էր, բայց դեռ աշխատում էր, պատ էր շարում: Որմնադրի մուրճի օգնությամբ արդեն քիչ էր դիմում: Ժամանակ առ ժամանակ դիմում էր փահլային ու ասում.

- Ուստան քե մատաղ: Մին հանց քար պեր, վեր տիմիմ պատեն ես դաթըմը, վեր վեչ մեծ ինի, վեչ՝ կուճուր:

Փահլան էլ, հարգելով տարեց վարպետին, հերթով բերում էր քարերը, մինչև որ մեկն ու մեկը կհարմարվեր:

Ջունշուղը անմիտ տարիքն առել, այլևս չէր աշխատում ու կնոջ հետ ապրում էր գյուղում: Այդ տարիներին գյուղում երկու հիմնական աղբյուրներ կային՝ Կյղըտեղեն աղբյուրը՝ գյուղի վերին թաղում, և նրանից վերցրած ու գյուղի կենտրոնական մաս հասցրած երկրորդ աղբյուրը: Աղբյուրներից հեռու ապրող մարդիկ, հատկապես մեծ ընտանիք ունեցողները և տարեցները ջուրը տանում էին ավանակներին բարձած կժերով: Նրանց թվում էր և Ջունշուղը ամին: Մի օր էլ, երբ Ջունշուղը անմիտ եկել էր ջրի ու լցրած կժերը ուզում էր բարձել ավանակին, նրան է մոտենում աղբյուրի մոտ կանգնած երիտասարդներից մեկը և իր օգնությունն առաջարկում: Ջունշուղը ամին նեղացավ ու ասաց.

- Աղա՛, տեն կա՛ց, սա ինձ հետե հինչ ան՞, շփիչկեք ա: Որից հետո բարձեց կժերը ու հեռացավ:

Կնոջ մահից հետո կյանքի վերջին տարիները ապրեց Բաքվում՝ որդիների մոտ: Չնայած իր պատկառելի տարիքին, ամեն օր առավոտները վեր էր կենում, ու բակում մի մեծ քար կար, մի երկու անգամ բարձրացնում ու իջեցնում էջ, ինքն իրենց գոհ, ասում.

- Խուվա՛, ջանքս եկավ տեղը:

Ջունշուղը անմիտ Բաքվում էլ կնքեց իր մահկանացուն՝ իր հետ տանելով բազում լեզենդներ:

ՀԻՆՉՔԱՆ Ա ՅԵ՛ ԻՆՉ ՄԱՆԱ

Երկու տասերից ու երկու պապերից միայն մի տատ են տեսել ու շատ բան կորցրել:

տում ավագ գիտաշխատող է: Տարիներ առաջ հրավիրվել էր Արցախի պետական համալսարան, որտեղ աշխատել է որպես գիտական քարտուղար: Բազմաթիվ մասնագիտական աշխատությունների և հոդվածների հեղինակ է: Գրել է նաև «Մեր գյուղի մարդիկ» գիրքը, որում գեղարվեստորեն ներկայացրել է հայրենի Խնապատի հետաքրքիր մարդկանց կերպարները՝ յուրօրինակ ձևով արտացոլելով տվյալ ժամանակաշրջանը: «Լուսարար»-ը ժամանակին անդրադարձել է այդ գրքին:

Հարգարժան պրոֆեսորն իր գիտական աշխատանքին զուգահեռ շարունակում է գրել ծննդավայրի մարդկանց մասին: Վերջերս նա «Լուսարար»-ին է ուղարկել իր նոր գրվածքներից մի փունջ, որը սիրով ներկայացնում ենք ընթերցողին:

Մայրս տասը տարեկան էր, երբ զրկվեց ծնողներից: Նա մեծացել է իր ավագ եղբոր ընտանիքում, որն ավելի քան քսան տարի մեծ էր իրենից և որի մեծ դուստրը իր տարեկիցն էր: Մայրս մեծ երախտագիտությամբ էր հիշում եղբոր կնոջը, որն իր աղջկա պես սիրել ու պահել էր իրեն:

Բաղդասար պապս մահացավ 1943թ., երբ հայրս խորհրդային բանակի շարքերում թուրքիայի հետ մեր սահմանն էր պաշտպանում: Նրա մասին մեր պատկերացումները հիմնականում կապված են հորս պատմածների հետ: Պապս փարթամ բեղերով, միջախասակ, ջլապինդ տղամարդ էր, լավ դարբին՝ հայտնի իր թծելու վարպետությամբ: Պարզվում է, որ լավ դարբին լինելուց բացի նա հմուտ ու բանիմաց մարդ էր, օժտված գերազանց հիշողությամբ ու բարի հումորով: Նրա պատմածներով հայրս, որը նույնպես ուներ գերազանց հիշողություն, կազմել է Սևունց ազգի տոհմածառի մեր ճյուղը՝ հինգ սերունդ ետ:

Դժբախտաբար, պապս ոչ մի լուսանկար չի թողել: Հայրս պատմում է, որ մի անգամ Ապարեց պատահաբար տեսել է ռուս գրող Մաքսիմ Գորկու նկարը ու բացակայել էլ:

- Ես շան տղան հինջքան ա յե՛ ինձ մնան: Հենցնս յինս իմ ավապեր ինի:

Մեր գիտակցության մեջ այդպես էլ ձևավորվեց մեր պապի՝ Սևունց Բաղդու երևակայական կերպարը. նա լավ դարբին էր՝ բարի հումորով, հմուտ ու բանիմաց:

ՄԵՆԱԿ ԵՍ ԼՈՒՄՆ ԸՍ ՀԱՎԱՆ

1961 թվականը նշանակալից էր սովետական ժողովրդի կյանքում նախ և առաջ նրանով, որ ապրիլի 12-ին Յուրի Գագարինը թռավ տիեզերք: Երկրորդ նշանակալից իրադարձությունը կապված էր փողերի փոխման հետ: Խորհրդային Միությունում այն կապում էին ռուբլու գնողականության բարձրացման հետ: Լավ էր, թե վատ, անգամ տարիների հեռվից դժվար է գնահատել:

Այս երկու կարևոր իրադարձությունների հետ միասին խնայատեսիլների կյանքում տեղի ունեցավ ևս մեկ՝ ոչ պակաս կարևոր իրադարձություն: Մինգչաուրից 220 վ էլեկտրական հոսանքը հասավ Խնապատ:

Մինչ նախապատրաստական աշխատանքներն էին ընթանում, էլեկտրասյուներ տեղադրում, հոսանքի լարերը անցկացնում, ժողովուրդը ակտիվ քննարկում էր «մեծ» հոսանքի դերն ու նշանակությունը, հոգեբանորեն պատրաստվում դիմավորելու այն: Նախ պետք է ազատվել վախից, որովհետև լսել էին, որ՝ «նրա թխածը թխած ա», «վեր թխից՝ մարթ տժեր ա սաղ պրծնում»:

Վերջապես եկավ «մեծ» հոսանքը՝ իր հետ բերելով մեծ ուրախություն ու ցնծություն: Նախ վերացվեցին նախկին ՀԷԿ-ի ժամանակ եղած սահմանափակումները.

- Պռագմիյոց ան՞, օգում ըս տասը հատ «գորտակոյ» լամբուշկա միացրու... Ծախսիր ինչքան ուզում ես, ինչքան կարող ես, վերջում՝ վճարիր ըստ հաշվիչի ցուցումի:

Հենց վախն անցավ, սկսեցին կատակել, սրամտել.

- Պա ասում ըք լամբը ուրան տակեն իշեղ չի՞ տամ: Միհենգյի լամբերը յիա ռուրանց տակեն ըն իշեղ տամ:

Իմ փիլիսոփա տատը ավելի հեռուն գնաց.

- Միհենգյի կառավարությունն անակ էս լնսին ըմ հավան...

Իսկապես տոն էր: Գյուղում հայտնվեցին առաջին էլեկտրական արդուկները, ռադիո-ընդունիչները (դրանք գյուղում հայտնի էին «օղային ռադիո» անունով), իսկ երկու տարի անց՝ հեռուստացույցները, սառնարանները:

ԷՆ ՎԵՐ ՍՄԻ ԿՈՒՃՈՒՐ ՃԱՐ Ա Է ԸՆՈՒՄ...

Բաթի ապան իրեն լավ չէր զգում ու մի օր գնում է բժշկի: Բժիշկը չափում է Բաթի ապայի զարկերակային ճնշումը և պարզում, որ այն նորմալից բարձր է: Իսկ ի՞նչ է անում բժիշկը մման պահերին: Ապրես, դեղեր է նշանակում: Բաթի ապան էլ առնում է դեղը ու գալիս տուն:

- Բիադուր դադայ, դոխտուրը հի՞նչ ա ասալ,- հարցնում է հարևանուհին:

- Դոխտուրը ասալ ա դավլենիտ պեցուր ա, ճար ա կյրնալ,- պատասխանում է Բաթի ապան:

- Հի՞նչ ճար ա,- հետաքրքրվում է հարևանուհին:

Բաթի ապան մոռացել էր դեղի անունը ու փորձում է բացատրել: Բուք մատը մոտեցնելով ցուցամատի ծայրին՝ պատասխանում է.

- Էն վեր ստի կուճուր սիպտակ ճարա է ընձն, մաչալն էլ գիծ, նրանայա...

Հատե տի: Կարճ, կոնկրետ և, որ կարևորն է, հասկանալի:

Սրանից հետո իմացեք, եթե ձեզ ճնշում իջեցնելու դեղ է պետք, դեղատոմսի մասին մոռացեք: Պարզապես մտքե ցանկացած դեղատոմս, բուք մատը մոտեցրեք ցուցամատի ծայրին ու բացատրեք: Հա՛, չմոռանաք, անպայման նշեք՝ մաչալը գիծ կա...

ՄԵՆՔ ԱՅՆ ՍԵՐՈՒՆԴՆ ԵՆՔ...

Մենք հետապետերազմյան սերունդն ենք: Գիտե՞ք որոնք են մեր սերնդի տղաների ամենատարածված անունները. Յուրիկ, Շուրիկ, Վալերիկ, Սլավիկ, Ժորիկ, Բորիկ, Էդիկ, Միշա, Գրիշա, Սաշա, Սերյոժա, Կոյա, Արկայա, Վոլոյա... Սկստեցի՞ք, թվարկած անունները հիմնականում ռուսական են ու աղավաղված: Կհարցնե՞ք պատճառը: Պատասխանեմ: Պատերազմից ողջ վերադարձածները իրենց ընկերների ու հրամանատարների անուններն էին անմահացնում, իսկ գյուղխորհրդի նախագահն ու քարտուղարը օգնում էին նրանց: Այդքան էին կարողանում... Չկարծեք հայկական կամ այլ անուններ չկային: Կային Անդրանիկ ու Դավիթ, Սամվել ու Մամվել, Բագրատ ու Բաբելեն, Արարատ ու Հրանտ: Չմոռանանք նաև շատ տարածված, սիրված և, որ կարևորն է, մաքուր «հայկական» Համլետ անունը:

Մենք այն սերունդն ենք, որը կոնֆետ ու պեչենի (թխվածքաբլիթ) դեպքից դեպք էր ուտում, երբ խանութը ստանում էր, կամ քաղաքից մարդ էր գալիս: Իսկ տորթի մասին լսել էինք, հնարավոր է անգամ տեսել էինք կինոյում: Բայց նաև «սոված են» ասելու իրավունք չունեինք: Գիտե՞ք ինչու: Որովհետև, եթե մեկնումեկը ասեր «սոված են», ամմիջապես կլսեր սաստու պատասխանը.

- Սոված ըս՞, տաշտը լիգը ցորեն հաց ա...

Իսկ եթե հարցը կրկնեիր, կպատմեին պատերազմի դաժան տարիների մասին, երբ

մարդիկ ժմեխ էին ուտում, սովից, համաճարակից մահանում:

Մենք այն սերունդն ենք, ում մանկությունը հիմնականում անցել է դրսում՝ այգում, դաշտում, անտառում: Գուցե այնքան էլ լավ չենք սովել, բայց դրա փոխարեն որքա՞ն ենք թուք, մոշ, խաղող, թուզ, նուռ, շլոր, հոն ու զկեռ կերել: Համով էր: Այն էլ ինչպե՞ս... Նախանձեցի՞ք: Դիմացե՞ք:

Մենք այն սերունդն ենք, որը կարկատած շոր ու տրեխ է հագել, ու ոչ ոք դրա համար մեզ չի ծաղրել կամ նախատել, որովհետև, ոչ խանութում շոր ու կոշիկ կար, ոչ էլ մարդկանց մոտ՝ փող: Իսկ դպրոց, մեծ մասը գնում էր թոբրակով, շատ քչերը դպրոցական պաշտոնական ունեին: Թոբրակ ասածը հին շորերից կարված մի տոպրակ էր՝ ուսը զգելու, նորից շորից կարված թուղով, որում իրենց գրքերն ու տետրերն էին պահում: Այն ուներ լրացուցիչ հարմարանք՝ դրսից անրացված օդափակ թանաքամանի համար: Ա՛խ, այդ թանաքամանները... Ինչքա՞ն տհաճություններ են դրանք պատճառել աշակերտներին, երբ անսպասելի շուռ են եկել տետրերի կամ դասագրքերի վրա: Բայց այդ ամենը չէր խանգարում, որ մենք լավ սովորեցնեք: Չնայած մեր լավ սովորելուն, մեր ծնողներն էլ էին երբեմն բողոքում՝ օրինակ բերելով իրենց սերնդակիցներին, որոնց անունները, դժբախտաբար, չեն հիշում, ովքեր հացի հերթում անգամ գիրք էին կարդում:

Մենք այն սերունդն ենք, որը դեպքից դեպք էր կինո նայում, քանի որ կինոն էլ էր ուշ-ուշ գյուղ գալիս: Իսկ գիտե՞ք, թե ինչո՞վ էր կինոն: Վստահ եմ, այսօրվա սերունդը անգամ տասը փորձից չի գուշակի, երևակայությունը չի բավարարի: Այն ծվով էր կամ... կարպետով: Հիմա էլ կասեք, ի՞նչ կապ կարող են ունենալ ծուն ու կարպետը (հայկական ռադիոն մման դեպքերում կպատասխաներ. երկուսով էլ չի կարելի սափրվել): Պատասխանեմ անմիջական: Նախ նշեմ, որ կինոն ցուցադրում էին ցերեկով՝ միացնելով իրենց հետ բերած էլեկտրական շարժիչը: Հետևաբար, կարպետն անհրաժեշտ էր ակունքի պատուհանները լուսաբողարկելու համար, իսկ ծուն տալիս էին փողի փոխարեն: Ձուն, ոնց էլ լինի, գյուղում կգտնվեր կինոյի սիրահարների համար: Ֆիլմերը հիմնականում պատերազմի, մեր հաղթանակների մասին էին: Իսկ դուք ֆիլմի ընթացքում ծափահարե՛լ էք: Ինչպիսի՞ ուրախություն ու երջանկություն էր, երբ մերոնք հաղթում էին:

Այս բոլորից հետո մենք կարո՞ղ ենք ասել, որ ունեցել ենք անհոգ ու երջանիկ մանկություն: Վստահաբար կարող ենք ասել՝ այո՛:

ԿԱՐԻՔ ԶԿԱ

Դավիթ Հայրապետյանը (Ճիգյունց Դավիթ) գյուղում հայտնի էր դեռ դպրոցական տարիներից: Նա աչքի էր ընկնում իր բարձր հասակով, աղբբեջանների լավ իմացությամբ, օժտված էր յուրահատուկ հումորով: Լավ էր սովորում, իսկ ամենասիրած առարկան աշխարհագրությունն էր: Գերազանց տիրապետում էր քարտեզին: Երբեմն ուրիշ աշակերտներ, որոնք ևս սիրում էին աշխարհագրությունը, փորձում էին մրցել Դավիթի հետ: Նախապես քարտեզի վրա իմանալով այս կամ այն քաղաքի, պետության և այլնի տեղը, դիմում էին նրան քարտեզի վրա ցույց տալու այն: Նման դեպքերում Դավիթը վերցնում էր ցուցափայտը, մեջքով կանգնում դեպի քարտեզը ու ցույց տալիս պահանջված պետությունը, քաղաքը:

Սակայն Դավիթը թույլ տեղ ուներ. չէր սիրում քիմիա առարկան ու մնաց «աշնանային»: Նոր ուսումնական տարվա շեմին Դավիթը գնում է դպրոց՝ վերահանձնելու քիմիայի քննությունը: Մտնելով ուսուցչանոց, նա, առանց բարեկուր, ձեռքերը մեջքին, ոտքերը

ՆՈՐ ՄԱՐԶԱԶԵՎ

ԲՈՂԻՔԻ ԼՊԻՆԳՆ ԱՐՃԱՆՈՒՄ



Արցախում գործող մարզաձևերի կողքին վերջին շրջանում սկսել են զարգանալ նոր սպորտաձևեր: Աշխարհում լայն տարածում ունեցող բողիքի լոփինգ կամ կուլտուրիզմ մարզաձևերը հնարավոր է՝ այնքան էլ ծանոթ չէ արցախցիներին: Բայց հանրաճանաչ կինոաստղ Առնոլդ Շվարցենեգերի մասին գիտեն գրեթե բոլորը: Դրանց այդ մարզաձևում պարապելով է Շվարցենեգերը հեղինակություն ձեռք բերել: Իսկ Արցախում բողիքի լոփինգով պարապողներ կան:

Մեր գրուցակցի հետ խոսեցինք մարզաձևի եւ Արցախում դրա զարգացման հեռանկարների շուրջ:

Չարուք ԳԱՄՊԱՐՅԱՆԸ ծնվել է 1986թ. հոկտեմբերի 30-ին: Չարուքան օջախը Չարուքի շրջանի Տող գյուղում էր: Արցախյան ազատագրական շարժման մասնակից հայրը գոհվում է պատերազմում: Չարուքը մոր հետ տեղափոխվում է Ստեփանակերտ: Սովորում է Ստեփանակերտի 2-րդ դպրոցում, որտեղ ութամյա կրթություն ստանալուց հետո ընդունվում է Ք.Իվանյանի անվան ռազմամարզական վարժարան: Ավարտելով վարժարանը՝ մեկնում է Գուգասար: Վեց տարի սովորում է Գուգասարում, ավարտում սպայական ուսումնարանը, մասնակցում սպայական դասընթացներին: Վերադառնում է հայրենիք եւ 2009-ին ծառայության մտնում ՊԲ ԿՊՇ-ում՝ որպես սպա: Առայսօր ծառայում է:

- Չարուք, մեր գրուցը սկսե՞նք ավանդական հարցից. ինչպե՞ս սկսվեց Ձեր մարզական ճանապարհը:

- Սպորտի հանդեպ հետաքրքրություն եւ սեր ունեի դեռ երեխա ժամանակից: Տասներկու տարեկան էի, երբ իմ հասակակից շատ տղաների նման ես էլ սկսեցի սանդղակ ու շուկա պարապմունքների գնալ: Մի քանի տարի պարապել եմ սանդղակ ու շուկա, հետո ինձ փորձել են նաեւ քիթ բռնել: Որոշ ժամանակ անց սկսել եմ հետաքրքրվել ուժային եռամարտով, որն այլ կերպ անվանում են փաուերլիֆթինգ: Շուրջ տասը տարի պարապել եմ, աշխատել քաշերի հետ, ԳՅ առաջնությունում հրում՝ պառկած մրցապայքարում զբաղեցրել եմ երկրորդ տեղ: Որոշ ժամանակ զբաղվել եմ նաեւ արմրեսթլիզով: Իսկ մոտ երկու տարի առաջ առաջարկ են ստացել ԳՅ բողիքի լոփինգի եւ ֆիթնեսի ազգային ֆեդերացիայի նախագահ Գեորգ Չակոբյանի կողմից՝ ընդգրկվելու իրենց թիմում եւ պարապելու բողիքի լոփինգ: Սկզբում տարակուսանքով էի մոտենում այդ մարզաձևին, բայց համաձայնվեցի, ու հետո ամեն ինչ փոխվեց: Ինձ աջակցեցին, որ կարողանամ պարապել Արցախում: Մարզվում էի Ստեփանակերտի «Vallex Garden» մարզադահլիճում, ինչը հավաքեցի հնարավորություն էր ինձ համար: Մասնակցեցի ԳՅ առաջնության եւ կարողացա երկրորդ տեղ զբաղեցնել:

- Ավելի հստակ կողմնորոշվելու համար, թե ինչ մարզաձև է բողիքի լոփինգը, կարո՞ղ եք պարզաբանումներ անել:

- Բողիքի լոփինգը անգլերեն բառերից կազմված սպորտի անվանումն է, որը թարգմանաբար նշանակում է մարմնի կառուցում: Ավելի կոնկրետ այս մարզաձևը բնութագրվում է նրանով, որ մարզիկը ծանր գանգածների կիրառման եւ մարզասարքերի վրա պարապելու միջոցով զարգացնում է մկանները՝ պահպանելով մարմնի էսթետիկական որակը: Կարելի էր դեր ունի ճիշտ եւ հատուկ սննդակարգը: Դրա մեջ մտնում է բարձր էներգետիկություն ունեցող հատուկ սնունդ, որի մեջ պարունակվում են սննդաբար տարրեր, հիմնականում՝ սպիտակուցներ: Բողիքի լոփինգով անցկացվող առաջնություններն իրենցից ներկայացնում են մրցույթներ, որոնցում մրցավարները գնահատում են իրենց ցույց

տվող մարզիկների մկանային համակարգը համապատասխան քաշային կարգերում: Առաջնորդվում են այն չափանիշներով, որ մարզիկը պետք է ունենա համապատասխան քաշ, հասակ, էսթետիկական չափորոշիչներ, մարմնի համաչափություն, ինչպես նաեւ օժտված լինի մարմինը ցուցադրելու արտիստիզմով: Գործող դառնում է այն մարզիկը, որի մարմինը ավելի շատ է մոտ կատարելությանը:

- Բողիքի լոփինգը հիմնովին տարբերվում է Արցախում ճանաչված մարզաձևերից: Փաստորեն դա ոչ մենամարտ է, ոչ էլ թիմային խաղ: Իսկ Դուք առաջին մարզիկն եք Արցախում, որ մասնակցեցիք բողիքի լոփինգի առաջնության: Ինչո՞ւ կ հատկապես գրավեց Ձեզ այս յուրատիպ մարզաձևը, եւ արդյո՞ք Արցախում կան դրա զարգացման հեռանկարներ:

- Լինելով սպեցիֆիկ սպորտաձև՝ բողիքի լոփինգը, հիարկե, շատերի համար անհասկանալի մարզաձև է կարող է լինել: Շատերը չեն կարող պատկերացնել դրա լրջությունը: Սկզբում ինձ համար էլ կային անհասկանալի հարցեր՝ կապված այս սպորտաձևի հետ: Ավելի շատ ինձ գրավեց կոփվածությունը: Տղամարդը պետք է կոփված լինի: Երբ տեսնում եմ, որ որեւէ մեկը, հատկապես ամառային շրջանում լողավազաններ հաճախող մարդիկ ունեն ավել քաշ, փորի շրջանում կախված ճարպային մաս, մի տեսակ անհարմար եմ զգում նրանց փոխարեն: Մարմինը պետք է կոփել եւ խնամել: Այս սպորտում ինձ գտնելու դրդապատճառներից մեկը թերեւս այդ սկզբունքն էր: Արցախում դեռ զարգացած չէ այս մարզաձևը: Գուցե դա պայմանավորված է նրանով, որ պետության վարած քաղաքականությամբ պայմանավորված՝ նախապատվությունը տալիս են օլիմպիական մարզաձևերի զարգացմանը: Բայց ցանկացած նորույթ ժամանակի ընթացքում կարող է արդիական դառնալ: Նպատակ ունեն հովանավորներ գտնելու դեպքում Արցախում ֆեդերացիա հիմնել եւ մարզիկներ ներգրավել: Ես նույնպես Արցախը սպորտի միջոցով աշխարհին ճանաչելի դարձնելու մարտավարության եմ հավկած: Պետք է հնարավորություններ ստեղծել եւ մասնակցել միջազգային բարձր վարկանիշ ունեցող առաջնու-

թյունների եւ ցույց տալ, որ արցախցին գիտի ոչ միայն մարտնչել, այլեւ աշխարհին տեսանելի դարձնել իր գեղեցկությունը:

- Ո՞ր տարիքից կարելի է պարապել բողիքի լոփինգ, եւ արդյո՞ք առողջության համար հակացուցումներ չկան տվյալ սպորտով պարապելու համար:

- Ամեն ինչ կախված է պարապողի գենետիկայից: Եթե կան համապատասխան տվյալներ, ապա տարիքն այնքան էլ կապ չունի: Նշեն, որ դա երեխաների սպորտ չէ: Բայց ցանկալի է, որ պարապողը նախապես մարզված լինի որեւէ սպորտաձևով: Բողիքի լոփինգը շատ նրբություններ ունի, որոնք պետք է հաշվի առնել եւ կարողանալ կատարել: Կարելի է, որ օրգանիզմը առողջ լինի: Պետք է դիմանալ ծանր պարապմունքներին: Օրգանիզմը պետք է ընդունակ լինի ընդունել հատուկ սնունդ: Ասում են՝ պրոֆեսիոնալ սպորտը խեղում է, իսկ ֆիզիկուլտուրան՝ բուժում մարդուն: Ամեն դեպքում, բժշկի հետ խորհրդակցելը պարտադիր է պարապելու համար:

- Չարուք, ի տարբերություն այլ սպորտաձևերով պարապողների, որոնք չեն պահանջում հատուկ սնունդ եւ մարմնի հատուկ խնամք, արդյունքի հասնելու համար Դուք պետք է աշխատեք Ձեզ վրա նաեւ պարապմունքներից դուրս: Ընտանիքում աջակցո՞ւմ եմ:

- Այո, առանց աջակցության դժվար կլինի: Կինս լավ է վերաբերվում իմ սպորտով պարապելուն եւ հիմնականում օգնում է ինձ: Երեխայիս մոտ նույնպես հետաքրքրություն կա սպորտի հանդեպ: Վերջերս սկսել է կարատեի խմբակ այցելել, միզուցե հետազայում ինքն էլ բողիքի լոփինգով կբաղվի:

Շարունակում են պարապել Արցախում: Փնտրում են հովանավորների, որոնք ինձ ֆինանսապես կօգնեն առաջիկա առաջնություններին մասնակցելու համար: Նախատեսում եմ մասնակցել կայանալիք GEORGIA GRAND PRIX միջազգային մրցումներին: Դիմել եմ սպորտի վարչություն, որպեսզի աջակցեն ֆեդերացիա բացելու հարցում: Դեռ սպասում եմ: Պետք է ժամանակի հետ քայլել եւ Արցախում զարգացնել այնպիսի մարզաձևեր, որոնք արդիական են ամբողջ աշխարհում:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

բացած ուսերի լայնությամբ, լուռ կանգնում է ուսուցչանոցի մեջտեղում:

- Դավիթ, խե բարև չը՞ս տամ,- հարցնում է ուսուցիչներից մեկը:

- Կարիք չկա,- հանգիստ պատասխանում է Դավիթը:

Բարձրանում է հանընդհանուր ծօծաղ: Երբ բոլորը հանգստանում են, մեկ այլ ուսուցիչ հարցնում է.

- Դավիթ, խե քիմիա չը՞ս սուվերում:

- Քիմիան յոռոռոթական առարկա յա,-մույն հանգստությամբ պատասխանում է Դավիթը:

ՍԽԱԼ ՊԱՅԻՆ՝ ՍԽԱԼ ՏԵՂՈՒՄ ԵՎ ՃԻՇՏ ՊԱՅԻՆ՝ ՃԻՇՏ ՏԵՂՈՒՄ

Ճիգունց Դավիթը, ծառայելով խորհրդային բանակում, վերադարձել էր հայրենի գյուղ: Նա հաջողությամբ հանձնում է բնությունները, ստանում վարորդական իրավունք ու աշխատանքի անցնում կոլտնտեսությունում: Վարորդական իրավունքը ստանալիս նրան օգնե՞ց համագյուղացի «միլիցիա» Ապրետը, թե՞ ոչ, հայտնի չէ: Գայտնի է միայն, որ ավտոտեսուչ Ապրետ Չակոբյանը համագյուղացիներից շատերին էր օգնել «պրավա» ստանալու: Գիմա կմտածեք, թե ինչ կարևոր է՝ օգնել է, չի օգնել, և ի՞նչ կապ ունի Ապրետը այս պատմության հետ: Պարզվում է՝ ունի, այն էլ՝ ինչպիսի:

Ինչե՞ր ասես, որ չեն պատմում կոլտնտեսության վարորդների մասին: Անգամ երգեր

են հորինել նրանց պատվին: Ոմանք ասում են, որ վարորդները երեք ակը օգտագործում են իրենց շահերի համար, մեկ ակը՝ կոլտնտեսության: Ասում են նաև, որ իբր թե մի կոլտնտեսության նախագահն ասել է.

- Ես մեր շոփերներն անա էնքա՞մ գոհ ըմ, վրեր ըմձվա ես թիժ գործեն վախտ հըսցնում ըմ իւրանց գուրծերեն նհետ կոլխոգեն գործերն էլ անին:

Կատակը՝ կատակ, իրականում վարորդները իրենց պարտականությունները ամառ թե ձմեռ կատարում էին բարեխղճորեն, տեղն ընկած տեղն էլ օգնում համագյուղացիներին: Այդ մասին գիտեին բոլորը, այդ թվում նաև՝ կոլտնտեսության նախագահները, որոնք չտեսնելու տալով ոչ արգելում էին, ոչ էլ՝ տուգանում:

Գիմա պատմեն ճիգունց Դավիթի հետ կապված մի դեպք: Դուք երբևիցե տեսե՞լ եք լեռնային գյուղի ճանապարհները: Դրանք անունով էին միայն ճանապարհ, իրականում...

Մի ամառ, երբ կոլտնտեսության ֆերմաների համար դաշտից սիլոսն էին տեղափոխում, դժբախտ դեպք տեղի ունեցավ: Ամձրև էր եկել, ճանապարհներն էլ դեռ թաց էին: Դավիթը թեք լանջով անցնելիս, կարծես ներքին ծայրն էր հուշում, թեքվում է դեպի ցորենի արտը ու տրորելով այն՝ շարունակում է իր ճանապարհը: Լուրն անմիջապես հասցնում են նախագահին: Նախագահն էլ, ի տես մյուսների, հենց դաշտում բանավոր կարգով կար-

գադրում է Դավթի հինգ աշխօրը պահել: Որոշ ժամանակ անց նույն տեղով անցնելիս գյուղի մեկ այլ վարորդ՝ Մեծունց Արտոն, տեսնելով տրորված արտի հատվածը և հիշելով նախագահի կարգադրությունը, գնում է արտի կողքով՝ թեք թաց լանջով: Ավտոմեքենան, ոչ վարորդի մեղքով, սահում գլորվում է ձորը: Վարորդը, բարեբախտաբար, ողջ է մնում, ու նրան ջարդվածքներով տեղափոխվում են հիվանդանոց, իսկ նրա կողքին նստած «դոխտուր» (իրականում՝ ֆելդշեր) Գուրգենը մահանում է: Նախագահը, իմանալով վթարի մասին, չեղարկում է իր կարգադրությունը:

Ամեն երեկո վարորդները գնում են նախագահի գրասենյակը հաջորդ օրվա առաջադրանքները ստանալու: Նրանցից որևէ մեկին որպես կանոն թողնում էին գյուղում՝ օգնելու այգիների, բուստանների և ֆերմաների աշխատանքներին: Նման դեպքերում Դավիթը կատակում էր.

- Եթյուց պուտյովկաս պա գօրոդու ա:

Այս տարբերակը վարորդների համար ձեռնտու տարբերակ էր. նախ աշխատանքն է համեմատաբար թեթև, երկրորդն էլ, միլիցիայի աչքից հեռու, ու կարող ես քեզ թույլ տալ առիթի դեպքում մեկ-երկու բաժակ խմել: Իսկ խմելու առիթ գյուղում միշտ գտնվում էր, եթե չէր գտնվում, ստեղծում էին:

Մի անգամ, երբ Դավթի «պուտյովկան պա գօրոդու» էր, գյուղ վերադառնալիս նրան կանգնեցնում է «միլիցիա» Ապրետը: Ապրետի պրոֆեսիոնալ աչքը հեռվից էր նկատել, որ

Դավիթը լավ խմած է: Այս անգամ Դավթի բախտը չի բերել, նա սխալ պահին հայտնվել էր սխալ տեղում: Ապրետը, կանգնեցնելով մեքենան, Դավթին իջեցնում է մեքենայից, վերցնում վարորդական իրավունքն ու կարգադրում.

- Կլյանս Ստեփանակերտս ստանաս:

Իսկ դա նշանակում է, որ լավագույն դեպքում կտուգանեն, իսկ վատագույն դեպքում՝ մի քանի ամսով, հնարավոր է՝ անգամ մեկ տարով, կզրկեն վարորդական իրավունքից:

Անցնում է մի քանի օր, սակայն Դավիթը չէր շտապում գնալ Ստեփանակերտ, ռիսկ չէր անում:

Ամեն տարի մայիսի երկուսին դարաբաղի բոլոր հայերը այցելության են գնում իրենց հարազատների շիրիմներին: Եվ ահա մայիսի երկուսին գյուղի գերեզմանատանը Դավիթը նկատում է Ապրետին: Այս անգամ Դավիթը ճիշտ պահին հայտնվել էր ճիշտ տեղում: Մոտենալով Ապրետին՝ ձեռքը դնում է նրա հոր շիրմաքարին ու ասում.

- Տու ինիս քու հոր գերեզմանը, պրավաս ինձ տո:

Դավիթը կպել էր հայ մարդու համար ամենամուրթ ու սուրբ կետին: Ո՞ր հայը չի հարգում իր ծնողի հիշատակը: Ապրետը անակնկալի է գալիս ու վերադարձնում վարորդական իրավունքը:

Իսկ դուք ասում էիք՝ ի՞նչ կապ ունի այս պատմության հետ «միլիցիա» Ապրետը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎՈՐ ԿԱՐԱՊԵՆՅՈՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԳ ԳՐԱԿԱՆԱԳԵՏԻ ՏԵՍԱՊԱՆՏՈՒՄ



Նանար Սիմոնյան

Չարագցման ու հարստացման ընթացքի մեջ է ոչ միայն հայոց գեղարվեստական գրականությունը, այլև գրականագիտությունը, որին ակտիվորեն մասնակցում են նաև երիտասարդ մասնագետները՝ ընթերցողներին մատուցելով լուրջ գիտահետազոտական աշխատություններ ակամավոր գրողների գրական ժառանգության մասին:

Այդ առումով խրատուսանքի արժանի գործ է կատարել Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» պետհավատարմագրված համալսարանում գործող Արևմտահայերենի, հայագիտության գիտահետազոտական Լուրդովիկյան և Յակոբ Այնթապյան կենտրոնի գլխավոր մասնագետ Նանար Սիմոնյանը՝ հրատարակելով «Հավոր Կարապենցի ստեղծագործությունը» ուսումնասիրությունը (խմբագիր՝ Վարդան Հակոբյան):

Հակոբ Կարապենցը սփյուռքահայ գրականության եզակի դեմքերից է: Նրա պատմվածքները, վիպակները, վեպերը, փորձագրությունները՝ գաղափարական խորքային հագեցվածությամբ ու գեղարվեստական բազմերանգ առանձնահատկություններով ոչ միայն ազգային, այլև համամարդկային արժեք են ներկայացնում: Այդ են վկայում հայոց մամուլում ժամանակին տպագրված բազմաթիվ գրախոսություններն ու գիտական աշխատանքները: Ասենք, սակայն, որ Կարապենցի գրական հարուստ ժառանգությունը պատկանում է իրար հաջորդող սերունդներին, որոնցից յուրաքանչյուրը ասել է և ասելու է իր խոսքը: Տվյալ դեպքում Նանար Սիմոնյանի ուսումնասիրությունը ներկայացնում է 21-րդ դարասկզբի ամբողջական մի սերնդի գնահատական՝ գրված գեղարվեստական երկերի գիտական ընկալման և արժեքային կարգավորման մասին: Պատահական չեն անվանի գրականագետներ Սուրեն Դանիելյանի և Էդվարդ Մկրտչյանի քննադատական արձագանքները սույն աշխատության վերաբերյալ: Սփյուռքահայ գրականության բազմալստակ մասնագետ Սուրեն Դանիելյանը հաստատում է. «Գիտահետազոտական հետաքրքիր աշխատանք է կատարել Նանար Սիմոնյանը: Գրքում նա ոչ միայն հանգամանորեն անդրադառնում է մեր արձակի երևելի դեմքերից մեկին՝ Հակոբ Կարապենցի ստեղծագործության գեղարվեստական ու գաղափարական առանձնահատկություններին, կատարում ճշգրիտ վերլուծություններ, այլև ընդհանուր համապատկերի մեջ ներկայացնում է սփյուռքահայ գրականության զարգացման գլխավոր միտումները՝ հայ և համաշխարհային գրականության ընդհանուր համատեքստում» (Նանար Սիմոնյան, «Հակոբ Կարապենցի ստեղծագործությունը», «Համագային հայ կրթական և մշակութային միություն», Ստեփանակերտ, 2021, էջ 5):

Օտարաբանալով Ն. Սիմոնյանի սույն աշխատությունը՝ ոչ միայն գեղագիտական հաճույք են ստանում, այլև ուրախանում են, որ հայ մշակույթի Արցախյան հատվածն արդեն ունի գրականության փիլիսոփայությունն ընկալող ու խորհմացությամբ գնահատող երիտասարդ մասնագետներ, որոնց շարքում է Նանարը:

Հիրավի, լուրջ գործ է կատարել բանասիրական գիտությունների թեկնածու Ն. Սիմոնյանը: Աշխատության ներածականում քառերորդ դարի երկրորդ կեսի սփյուռքահայ արձակի ընդհանուր համապատկերի վրա ընդգծելով Հ. Կարապենցի գրական հարուստ ժառանգության տեղն ու դերը՝ Նանարը հաջորդ երեք գլուխներում հանգամանորեն վերլուծում և արժևորում է մեծանուն գրողի երկերը:

Առաջին գլխում Ն. Սիմոնյանը ներկայացնում է Հ. Կարապենցի ստեղծագործական որոնումները, աշխարհայացքի և մտածողության ձևավորումը և ընդհանրացնում, որ ժամանակին հայոց ընդհանուր գրականության մեջ հայտնություն էր նա: Գրքի հեղինակն այստեղ մատնանշում է անվանի գրողի ակտիվ մասնակցությունն ու ծանրակշիռ կարծիքը գրական տարբեր սանքների և ուղղությունների վերաբերյալ՝ մշտապես ընտրելով գեղագիտական իր դավանանքը՝ համաշխարհային գրականությանը համաքայլ գնալու իր բուռն ձգտումը: Նանարի ընդհանրացումներն այստեղ լրիվ համոզիչ են:

Ըստ էության դիտարկելով Կարապենցի վերաբերմունքը հայ և համաշխարհային գրականության հանդեպ՝ Նանարը նշում է, որ անվանի գրողը սփյուռքահայ գրականությունն արժևորել է որպես համաշխարհային գրականության բաղկացուցիչ մաս: «Բարձր գնահատելով ազգային և տոհմիկ գրականությունը, ավելացնում է Նանարը, նա ընդգծում էր, որ հենց ազգայինից է գրողն անցնում համամարդկայինի: Այս հենքով Կարապենցը նկատում էր, որ հայ կյանքը պատկերող հաջողված որևէ պատմվածք կամ վեպ արժանանում է համընդհանուր ուշադրության, եթե նրանում խորն է համամարդկային կենսահողը» (Նույն տեղում, էջ 35):

Աշխատության երկրորդ գլուխը նվիրված է Հ. Կարապենցի արձակին, որտեղ հանգամանորեն բնութագրվում են նրա նորարարական միտումները և գեղարվեստական ինքնատիպ առանձնահատկությունները:

Ուշադրության կենտրոնում ունենալով Կարապենցի «Անծանոթ հոգիները» պատմվածքների առաջին ժողովածուն և «Կարթագենի դուստրը» անդրանիկ վեպը՝ Նանարը հմտությամբ նշմարում է անվանի գրողի նպաստը կարոտի գրականության բազմերանգ շերտերում:

Այնուհետև Նանարն անդրադառնում է Կարապենցի պատմվածքներին, որոնցում պատկերված է քաղաքային կյանքը, ու կատարում հետևյալ ընդհանրացումը. «Հայ գրականության մեջ նա քաղաքային կյանքն արտացոլող գրողներից է՝ Աղասի Այվազյանի, Վարդգես Պետրոսյանի, Աբիգ Ավագյանի և այլոց հետ միասին: Բայց նա մյուսներից տարբերվում է նրանով, որ իր ընտրած քաղաքներում հայն իբրև հերոս, իբրև խառնվածք, ոչ հիմնական դերակատարության մեջ է մնում, այսպես կոչված, իր ածանցյալ առաքելությամբ: Հայ հերոսը մի դեմք է ամբողջության մեջ, ընդհանուր «ժխտի» խորքում... Նա հավելված է, այո, բայց կերտումի շրջանակի համար՝ անհրաժեշտ տարր» (Նույն տեղում, էջ 132):

Հ. Կարապենցն իր առաջին «Կարթագենի դուստրը» վեպից հետո ավելի քան տասը տարի անց գրեց իր երկրորդ «Աղասի գիրքը» վեպը: Գրքի հասույթը տրամադրվել է Միացյալ Նահանգների Արևելյան շրջանի հայկական ամենօրյա վարժարաններին: Այն արժանացել է ՀԲԸՄ «Ալեք Մանուկյան» և Ֆրանսիայի գրողների հատկացրած «Էլիզ Գավուբոյան-Այվազյան» հիմնադրամների ուշադրությանը:

Ն. Սիմոնյանը գտնում է, որ Կարապենցն ըստ էության հորձանուտի մեջ է առել այն ամենը, ինչ կարող է ներհիստվել անձնական կյանքի բուռն իրադարձությունների ընթացքին: «Տարակուսելի է, գրում է նա, թերևս այն զուգահեռն է, որով Հ. Կարապենցն իր հայալեզու վեպը

կառուցում է ամերիկյան գրական նորագույն շարժման ու ներքին թեմատիկայի սահմաններում՝ չկարևորելով, որ իր ստեղծագործությունը նախ և առաջ հայ գրականության մաս է, թեպետ քիչ ավելի ուշ նա «պարտադրաբար» իշխում է այդ մասին» (Նույն տեղում, էջ 83):

Նանարը գալիս է այն եզրակացության, որ «Աղասի գիրքը» երկի վիպական գործողությունների զարգացումների ուրվագծի մեջ հայկական գեղակշռում է: Դեռ ավելին, գրողը խորացնում է իր համար օրագրային այն ելակետը, թե զլխավոր հերոսի՝ Աղասի Նարյանի համոզմամբ հայությունը «միակ փրկությունն է»:

«Հ. Կարապենցը, ավելացնում է գրականագետը, վիպական հյուսվածքում փորձում է ձեռք գարկել Սփյուռքի մեջ անցյալ դարի 70-80-ական թվականներին առկա ազգային-քաղաքական գարթոնքի ընկալմանն ու գնահատումներին՝ արտահայտելու համար հայ-թուրքական հարաբերությունների քաղաքական բնույթը... Հ. Կարապենցի ցանկությունը պարզից պարզ է. նա գտել է իր հայկական լսարանը՝ մերժելով ու հերքելով հայկական «սահաբեկչություն» երևույթը, պատմության մեջ բարձրացնելով երկու ժողովուրդների հավաքական պատասխանատվության իրավունքը» (Նույն տեղում, էջ 142-143):

Գրականագիտական համոզիչ ընկալումներով վերլուծելով Հ. Կարապենցի բարձրարժեք վեպը՝ Ն. Սիմոնյանը ուսումնասիրության վերջում ընդհանրացնում է. «Հ. Կարապենցի գրական նկարագիրը հզոր ենթախորք ունի, որը ներքին ծավալումներով կարողանում է ճշգրտորեն բացահայտել օտարության մեջ ապրող հայկական ուրույն աշխարհը՝ իր անպարտակելի հոգևոր ու աշխարհագրական սահմաններով, վաղվա հանդեպ ունեցած շոշափելի լավատեսությամբ: Դրանով է Կարապենցի տեղը միշտ մնայուն է նորագույն շրջանի հայ արձակում» (Նույն տեղում, էջ 151):

Ն. Սիմոնյանի սույն աշխատությունը լուրջ ներդրում է ոչ միայն կարապենցագիտության, այլ նաև նորագույն շրջանի հայ գրականագիտության զանադարանում:

Ստորագրված է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 6 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 26.07.2021թ.:

Ստորագրված է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 6 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 26.07.2021թ.:

Ստորագրված է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 6 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 26.07.2021թ.:

Ստորագրված է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 6 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 26.07.2021թ.:

Ստորագրված է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 6 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 26.07.2021թ.:

Ստորագրված է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 6 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 26.07.2021թ.:

Արմուհյ

ԻՄ ԹԱՂԱՎԱՐԴ

Ի՛ն Թաղավարդ, վիշտո խորն է, Քեզ գավթել են թուրք ցեղերը Եվ ցրել են որդիներդ չգիտես ուր, Գեղատեսիլ քո դաշտերում, այգիներում Թուրքն է շրջում, Պղծում ամեն մի սրբություն: Կես գյուղ դարձած ի՛ն Թաղավարդ,

Քեզ իիշում են գավակներդ, Գիրկդ են ուզում նորից դառնալ, Տառապում են միշտ քեզ համար: Հույս ունենանք, կգա օրը, Քեզ կազատենք գերությունից, Նորից կգանք մենք քո գիրկը, Կշենացենք քեզ հիմնովին: Ձիւ կինչի դպրոցական զանգը նորից, Մեր սրտերին գարուն կգա նորից-նորից

ՁՈՐՎԱԾ ԱՇԿԵՐՏՆԵՐԻՍ ՀԻՇՆԱՍՎԻՆ

Ի՛ն սիրելի՛ աշակերտներ, Ձեզ իիշում են ամեն վայրկյան, Դուք գոհվեցիք, բայց ապրում եք Մեր սրտերում հավերժ անմահ: Ուզում էիք հողը փրկել մեր հայրենի, Բայց չստացվեց, թուրք ցեղերը գրավեցին, Ու անխնա քանդում են մեր սուրբ տները,

Չեն թողնում, որ այցի գնանք շիրիմներին Արծիվ, հերոս տղաների: Հավատում են, վերջը կգա այս ամենի, Նորից գյուղը գիրկը կառնի գավակներին, Ցավն այն է, որ այս անգամ Դուք չեք լինի մեզ հետ նորից:

Սեդա ԲԱՂԱՍՅԱՆ Թռչականու ուսուցիչ Թաղավարդ գյուղից

ՀԱՅԱՍՏԱՆ

ԽՍՐԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեքերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 6 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 26.07.2021թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: